



ԷԶՄԻԱԾԻՆ

1970 - Բ

ՌՆԺԸ
ԻԵՏԱՐԻ


Փետրուար

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Բ

1970




7A-12.547

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՇՏԱՐԱԿԵՅՈՒ ԾՆՆԴՅԱՆ
200-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ
ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿՎԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱԶՆՈՅ,
ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ
Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՅ ԵՒ ՍԻՐԵՅԵԱԼ ՀԱՄԱՅՆ
ՀԱՒԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Աստուծոյ ողորմութեամբ, ԺԹ դարը Հայաստանեայց եկեղեցոյ եւ ժողովուրդի պատմութեան վրայ կը բացոյի հոգեւոր զարթօնքի ու ազատութեան շեփորներով:

Հերոսական մաքառումներու այդ դարաշրջանի սեմին, մեր առջեւ կը բարձրանայ պայծառ ու հզօր իմացականութիւնը Հայրապետի մը, որ գիւցաւ ա. Էջմիածնի ոգեկան կատարներուն հասնիլ, եւ այդ բարձունքէն լուսաորել հոգեւոր-ազգային վերածնունդի ճամփան, առաջնորդելով իր ժողովուրդը այդ լոյսով:

Մեր եկեղեցւոյ պատմութեան երկնականարի վրայ բարձրացող այդ աստղը՝ **Աշտարակեցի Ներսէս Ե կաթողիկոսն է:**

Ինչպէս բազում մեծագործ եկեղեցական դէմքերու, նաեւ անոր հոգիին ծննդավայրը եղաւ ս. Էջմիածին, որուն նուիրեալ գաւառը եւ ապա Գափակալը դարձաւ, յիշատակութեան արժանի իրագործումներով, հայոց պատմութեան ամենէն բախտորոշ մէկ շրջանին:

Իր գործնէութեան առաջին օրերուն, ան հանդիսացաւ նախանձալոյզ ու ժրաշան բարեկարգիչը Մայր Աթոռի ներքին կեանքի, իբրեւ աջ բազուկը ծերունագարդ Դանիէլ եւ Եփրեմ կաթողիկոսներու, ծառայելով վարչական ու կրթամոլէր արդիւնալի աշխատանք:

Ապա, իբրեւ թեմակալ առաջնորդ, աննախընթացօրէն քեղուն գործնէութիւն ունեցաւ վրահայոց մէջ, յատկապէս որպէս կրթական ու մշակութային հաստատութեանց հիմնադիր ու ոգեշնչող ղեկավար:

Իր կեանքի կոթողային գործերէն մին, իր հիմնած վարժարանը եղաւ Թիֆլիսի մէջ 1816-ին: Ներսիսեան վարժարանը, աւելի քան մէկ դար, հանդիսացաւ արեւելահայութեան կրօնական, գիտական եւ հայրենասիրական կեդրոններէն մին, նախախնամական դեր կատարելով ի խնդիր հայ ժողովուրդի հոգեւոր լուսաւորութեան եւ ազգային գիտակցութեան կազմաւորման:

Մեծ Աշտարակեցին իր կեանքի ամենափառաւոր պահը ապրեցաւ սակայն 1827-ի հոկտեմբերին, երբ սուրբ խաչը ձեռքին՝ մարտի հրաւեր կարդաց, կազմակերպեց ու գլուխը անցաւ հայ կամաւորներու գունդերուն, վասն Քրիստոսի եւ վասն հայրենեաց ազատութեան, պառոգամելով՝ «Դիմադրեցէք թշնամուն եւ սորա արքանեակներին կամ ոռուսաց զօրքերի հետ միասին եւ կամ թէ ուրիշ կերպ. թէ հարկ լինի մի խնայէք ձեր արեան վերջին կաթիլը»: Այսպէս է որ հայոց զօրքերը անմահացան՝ Էջմիածնի և Երեւանի գրաման հերոսամարտերուն մէջ: Եւ այսպէս է որ ոռու ժողովուրդի օգնութեամբ վերջ գտաւ պարսիկ խաներու դաժան տիրապետութիւնը Արեւելահայաստանի վրայ:

Քրիստոնեայ Ռուսաստանի հովանիին ներքեւ, կրօնական-ազգային կազմակերպութեան ու զարգացման լայն հորիզոն բացուեցաւ հայ եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդի առջեւ: Նախորդ դարուն սկիզբ առած հոգեւոր-կրթական զարթօնքը, այժմ նոր պայմաններու մէջ, նոր թափով իր վերջնական հունին մէջ մտաւ, ճշմարիտ վերածնունդի ճանապարհով:

Եւ կամօքն Աստուծոյ, իր ժողովուրդին նուիրում պայծառատես ու քաջ Հովիւր, փառքով բարձրացաւ Լուսաւորչի գահին վրայ, հոգեւոր արթնութեամբ եւ երկաթեայ ձեռքով շարունակելով իր շինարար աշխատանքը, եւ սուսեւ ամրապնդելով կարգն ու կանոնը եւ շէնութիւնը Մայր Աթոռին եւ հայ եկեղեցական կեանքին:

Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսէս Ե Աշտարակեցին, մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդի վերածնունդը կերտող դէմքերէն մէկն է, արժանի մեր եւ սուրբա սերունդներու յարգանքին, իբրեւ ժիր մատուցակ լոյս հաւատքի, իբրեւ նոյնքան ժիր գործիչ գիտութեան եւ կրթութեան եւ իբրեւ «Պաշտպան հայրենեաց»:

Փառք եւ յանդիման լոյս իր յիշատակին:

Երանաշնորհ կաթողիկոսի ծննդեան երկուհարիւրամեակի լրումին, այսու Մեր կոնդակով կ'առաջադրենք, որպէսզի յառաջիկայ սեպտեմբեր ամսին, հայոց բոլոր եկեղեցիներու մէջ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօններ

մասնացումն եւ կենդանի խօսքով ոգնկոչումն կեանքն ու գործը Աշտարակեցի մեծ Հայրապետին:


«Յիշեցէք զգործս հարց ձերոց, որ ինչ քաջութիւնս արարին ի դարս իրաքանչիւր. ստացարուք փառս աւագութեան, եւ ժառանգեցէք զանուն յաւիտենից» (Ա Մակ. Բ 51):

Հարցեալ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուա կոնդակս ի 13-ն փետրուարի
1970 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԺԸ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 674





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՎԱՏԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԿԱՆԵՐԸ

Հայ եկեղեցին, ամեն տարի Մեծ պահքը նախորդող շաբաթվա ընթացքում, անմոռաց և երախտագետ զգացումներով նշում է խնկելի հիշատակը Սրբոց Ղևոնդյանց քահանաների, որոնք իրենց կյանքով, քարոզությամբ և նահատակությամբ հանդիսացան «Ախոյեանք եկեղեցույ», հավատավոր և անձնուրաց զինվորները արդարության և ճշմարտության, և համարձակ արիությամբ հայրենիքի և ժողովուրդի համար «հեղին զարիսն իրենանց ի նորոգումն եկեղեցույ»:

Ղևոնդյանց տոհմից մեկ օր հետո եկեղեցին նույնպիսի հանդիսությամբ ու ազգային հրապարտության քաղցր զգացումներով նշում է հիշատակը հայրենիքի զինվորների՝ Ավարայրի քաջերի, որոնք ընկան 451 թվականին «վասն Յիսուսի և վասն հայրենեաց» մղված հերոսամարտում:

Ս. Ղևոնդյանց քահանաներ անվան տակ մեծարվում են այն վկաները և անձնուրաց հոգևորականները, որոնք 454 թվականին, Ապար աշխարհում, Նյուշապուրի քերդի մոտ, Ռևան գյուղում, Հազկերտ Բ-ի հրամանով և Ատրորմիստ մարզպանի դրդումով, Ավարայրի ճակատամարտից հետո, նահատակվեցին, Հայաստանում նոր ապստամբական շարժման կազմակերպիչներ լինելու մեղադրանքով:

Նահատակ հոգևորականների մեջ էին. Հովսեփ կաթողիկոս Հոդոցմեցին, Սահակ եպ. Ռշտունյաց, Ղևոնդ երեց Վանանդեցին, Մուշե քհ. Աղբակեցին, Արշեն երեց Բագրևանդացին, Քաջաջ սարկավագ Ռշտունյաց:

Ղևոնդյանց քահանաների նահատակության ստույգ պատմությունը մեզ ավանդել խմբի կենդանի նահատակ Արքահամ եպ. Բզնունյացը, որը ծանր տառապանքների և չարչարանքներից հետո, հակառակ ի ցանկության, չի արժանացել նահատակության փառապատկին:

Հայ եկեղեցու քահանայությունը իր եռի ունի փառավոր և հիշատակության արժանի հոգևոր, մշակութային և հայրենասիրական գործունեության պատմություն:

Հավատավոր ու անձնուրաց հայ քահանա Ավետարանի կենդանի ոգով ներշնչված, իր ժողովրդի և հայրենիքի սիրով տոգորված, եղել է և հանդիսացել՝ հայ հավատի և հայրենասիրության քյուրեղացած արտահայտությունը, մեր ողջ պատմության ընթացքում, և որի պայծառ գործունեությամբ և հաճախ անձնուրաց նահատակությամբ «եկեղեցիք Հայաստանեայց պայծառապես զարդարեցան»:

Անձնուրաց, բարի և քաջ հովիվը օրհնություն և մխիթարություն է ժողովրդին և եկեղեցուն. «Հովի քաջ զանձն իր դնէ ի վերայ ոչխարաց... իսկ վարձկանն որ ոչ է հովի, թողու զոչխարսն և փախչի» (Հովհ. Ժ 12—13):

Ղևոնդյանք և նման քահանաներ դարերի ընթացքում կռեցին-կռիվեցին մեր եկեղեցական ուխտապահության և հայրենասիրության պրպզան ուխտը, և ցանկացան Ավետարանի լույսով ու ոգով, հայրենիքի սիրով ու շնչով ապրեցնել հայությունը, որպես ոգեկան հաղթականություն, որպես եկեղեցի և ժողովուրդ:

Ահա այսօր ևս դարերի խորքից, անցյալի մշտից, մեր դիմաց հառնում են պայծառ և արտառուչ կերպարները Ղևոնդյանց քահանաների, որոնք սիրահոժար կերպով, հանուն նվիրական երկու սկզբունքների՝ **հավատք և հայրենասիրություն**, հանձն առին նահատակությունը և այսօր էլ հնչում է նրանց կրակե պատգամը՝ ողողված դասալիքների, ճղճիմ ու փոքրոգի անձնավորությանց հասցեին, որոնք բռնել են հայրենալքումի անարի ճանապարհը. **«Ի բաց թողցուք զխառարային խորհուրդս մոլորելոցն, եղկելիս և ողորմելիս քան զամենայն մարդիկս զնոսա համարեցուք»:**

Ղևոնդյանք եղան մարտակիցներն ու ոգեշնչողները Վարդանանց հերոսամարտի:

451 թվականի մայիսի 26-ին Ղևոնդյանք և Վարդանանք Ավարայրում ղեկավարեցին մեր ժողովրդի հավատի և հայրենասիրության դյուցազնամարտը բռնության և խավարի ուժերի դեմ:

Ղևոնդյանց նահատակությունը հայ եկեղեցու հերոսացումն էր. Ավարայրը՝ հայ ժողովրդի հավաքական սրբացումը:

Ղևոնդյանք և Վարդանանք զոհաբերեցին ամեն ինչ եկեղեցական ուխտապահության և հայրենասիրության նվիրական գործի համար, մահվան դեմ խիզախումով ալնպիսի մի գործ կատարեցին, որի **«համբաւն պատմեացի յաիտեան»**, որպէսզի, **«քարձրացի կողմն ճշմարտութեան և մի քակտեացի ուխտն հաւատոցն մերոց»:**

Այսօր, երբ մի անգամ ևս ոգեկոչում ենք համբուրելի ու նվիրական հիշատակը Ղևոնդյանց և Վարդանանց վկաների, ապրում

ենք միաժամանակ դառնությունն ու վիշտը սփյուռքի մեր ազգային-եկեղեցական կյանքի այն տխուր և խորթ երևույթների, որոնք ընդհանուր ոչինչ չունեն Ղևոնդյանց եկեղեցական ուխտապահության և Վարդանանց ճշմարիտ հայրենասիրության հետ:

Հավական չէ ամեն տարի ս. պատարագով, խնկով ու աղոթքով և ազգային քեմերի վրա հանդիսությունների կատարումով, ոգեկոչել հիշատակը Ղևոնդ Երեցի և քաջն Վարդանի:

Հականն այն է, որ հավատարիմ մնանք նրանց եկեղեցական ուխտապահության և ճշմարիտ, անսակարկ հայրենասիրության ուխտին, ու ապրենք ու գործենք մանավանդ նրանց ոգով ու ընթանանք նրանց ճանապարհով:

Զգացական արտահայտությունները, սնամեջ հայրենասիրական ճառերը ոչ մեկ արժեք չեն ներկայացնում, երբ ամեն օր ոմանք փորձում են քակտել մեր հավատքի միասնությունը, պատակտել նրանց արյունով պայծառացած հայոց եկեղեցին ու ստոնություն քարոզել նրանց կյանքով և հրաշալիորեն վերածնված մեր հայրենիքի ու մեր հայրենասիրական իդեալների դեմ:

Այսօր, որպէս եկեղեցի և ժողովուրդ, պետք է հիշենք ամեն օր ու ամեն առթիվ Մամիկոնյանց մեծ տոհմի հայրենասիրական ուխտն ու երդումը. **«Քաջութեամբ միայն մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս մեր և մի տեսցեն աչք մեր կոխան ոտից պղծալից լեալ զսրբարանս մեր... և չարութիւնս քաջութեան վատութիւն մի խառնեցուք»:**





Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն


Հունվարի 23-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի որոշումով, մեծահարգ տիար ՍԱՐԳԻՍ ՏԻԳՐԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ նշանակվել է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ:

Փետրվարի 4-ին, առավոտյան ժամը 12-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նորընտիր նախագահ Սարգիս Տիգրանի Գասպարյանը պաշտոնական այցելություն է տվել Վեհաքառնույն Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինին:

Հայոց Հայրապետի և հայ եկեղեցու գործերի խորհրդի պարոն նախագահի միջև տեղի է ունեցել սրտագին զրույց՝ ջերմ մթնոլորտում:

Փետրվարի 11-ին, առավոտյան ժամը 12-ին, Հայոց Հայրապետը փոխարձ այցելություն է տվել Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Սարգիս Տիգրանի Գասպարյանին, Երևանում, նրա պաշտոնատան մեջ:

Վեհափառ Հայրապետին ողնեցում էր տ. Հուսիկ եպիսկոպոսը: Այցելությունն անցել է սիրալիր մթնոլորտում:



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԵԹՈՎՊԻԱՅԻ
ԿԱՅՍՐ, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-Ի
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-ԻՆ

ԱՊՐԱՍ-ԱՅԵՐԱ

Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոների առիթով, համուն Հա-
լատանյաց եկեղեցու, Մենք հաճույքն ունենք Ձերդ Կալսերական Վեհափա-
ռության ներկայացնելու Մեր սրտագին և ամենալավ բարեմաղթությունները:

Թող Ամենակալը Ձերդ Կալսերական Վեհափառությանը փառավոր և
անասան պահի Իր գահի վրա և Ձեր գեղեցիկ երկիրը պահի-պահպանի
խաղաղության և բարօրության մեջ:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷԶՄԻԱՇԻՆ

•
•

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷԶՄԻԱՇԻՆ

Խորապես երախտապարտ ենք Ձերդ Սրբության բարեմաղթությունների
համար Աստվածահայտնության տոնի առթիվ: Ջերմորեն փոխադարձում ենք
Ձեր բարեմաղթությունները՝ Ձեր շարունակական ստողջության և երջանկու-
թյան համար:

ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ

Կալսր Եթովպիայի

ԱՄՄԱՐԱ



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂԶՈՒՅՆԻ
ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Զերդ Սրբություն.

Հայտնում ենք Ձեզ Մեր արտագին շնորհակալությունները այն բարի մաղթանքների համար, որ հղել էիք Մեզ՝ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի սուրբ Ծննդյան փառավոր տոնի առթիվ: Մեծապես զգացվեցինք Ձեր եղբայրական սիրո այդ ջերմ վկայությունից:

Այս նոր տարվա սեմին Զերդ Սրբության, ձեր հոգևոր դասի և ձեր հավատացյալների նկատմամբ Մեր տածած սիրո արտահայտությունը հանդիսացող Մեր բարի մաղթանքները փստահում ենք Նրան, ով հայտնեց մեզ խաղաղության ավետիսը Հիսուս Քրիստոսի միջոցով: Թող Նրա շնորհը, որ փրկության աղբյուր է բոլոր մարդկանց համար, առատապես հաշտնվի մեր մեջ և մեզ ապրեցնի այս աշխարհում որպես հավատարիմ վկաները՝ Նրա ճշմարտության, ողորմածության և արդարության, որպեսզի մենք կարողանանք Նրա խաղաղության և հաշտության խոնարհ ծառաները լինել ամբողջ աշխարհի մարդկանց միջև:

Մենք հույս ունենք մանավանդ, որ այս տարին կլինի արդյունավետ տարի կաթողիկե եկեղեցու և օրթոդոքս եկեղեցիների միջև գոյություն ունեցող հարաբերությունների խորացման տեսակետից և կնշի մի նոր հանգրվան բոլոր քրիստոնյաների միության վերակազմության ճանապարհին:

Այս զգացումներով, սիրելի և մեծարգո Եղբայր Մեր, վերստին հայտնում ենք Ձեզ Մեր եղբայրական սիրո ամենաջերմ զգացումներն ի Քրիստոս:

ՎԱՏԻԿԱՆ

ՊԱՊ ՊԱՎՂՈՍ Զ

* Տե՛ս նախորդ համարի 10-րդ էջը:

Զերդ Սրբություն.

Երկյուղածությամբ, սուրբ հուզմունով և եղբայրաբար գալիս ենք Մեր այս տոնական համակով Զերդ թանկագին և սիրելի Սրբության հետ միասին հրճվելու այն մեծ ցնծության համար, որ հաշտարարվեց մարգարեների կողմից անցյալում և հուշակվեց երկնքի հրեշտակների կողմից հովիվներին՝ քերելով Զեզ և ձեր սիրելի ժողովրդին մեր հարգանքն ու մաղթանքները՝ Քրիստոսի ծննդյան մեծ և սուրբ օրվան առթիվ:

Թող մարդացյալ Տերը պարզեց Զերդ սիրելի Սրբությանը կատարյալ առողջություն, երկար տարիներ, իբր հովվապետը ձեր պատկառելի եկեղեցու, և տա Զեզ, ինչպես նաև համայն աշխարհին որպես հավատքի գործերի պարզանք, հույս և սիրո առատություն, խաղաղությամբ և ուրախությամբ լի այս հոր տարվա ընթացքում:

Ողջագործելով Զերդ Սրբությանը ի Քրիստոս, մնամք եղբայրական սիրով և մեծ հարգանքով՝

ԱԹԵՆԱԳՈՐԱՍ

Տիեզերական պատրիարք հունաց

Մ Տ Ա Մ Բ ՈՒ Լ

Զերդ Սրբություն.

Հոգեկան բարձր ուրախությամբ մեր ողջափառ եկեղեցին դիմավորում է աշխարհի ամենամեծ և սուրբ իրադարձությունը՝ Քրիստոսի ծնունդը:

Մեր միտքը ամբողջությամբ ուղղված է դեպի սուրբ Մանուկը՝ մեր Փրկիչը, և մենք ծնրադիր խոնարհվում ենք Նրա մեծագույն և աստվածային սիրո, աննառելի իմաստության և ողորմության առջև:

Եղբայրական սիրով ողջունում ենք Զեզ, Քրիստոսի ծննդյան տոնի առթիվ, և հղում ամենալավ ցանկություններս: Թող Տերը Իր երկնային օգնությունը առատորեն պարզեց Զեզ:

Թող ծավալվի մեր սրտերում, կյանքում և ողջ աշխարհում Քրիստոսի աստվածային վարդապետությունը, բանականության և իմաստության ոգին:

Թող աշխարհում ծաղկի մարդկային բարօրությունը, բոլոր ժողովուրդների միջև՝ խաղաղությունը, եղբայրությունը, սերը և բարի գործերը, ճշմարտությունն ու սրբությունը:

Այս խոհերով և երանալիս ցանկություններով դիմում ենք Զերդ Սրբությանը՝ խնդրելով Զեր սուրբ աղոթքների մեջ եղբայրական միություն ի Քրիստոս:

Զերդ Սրբությանը նվիրյալ եղբայր ի Քրիստոս՝

ԱԼԵՔՍԻ

Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

Մ Ո Ս Կ Վ Ա

Ձերդ Սրբություն.

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Համայն մարդկության Փրկչի ա. Ծննդյան փրկարար տոնի առիթով, ողջունում ենք Ձեզ քրիստոնեական եղբայրական ջերմ զգացումներով՝ սրտագին շնորհակալություն հայտնելով Նոր տարվա և ա. Ծննդյան տոների առիթով Ձեր շնորհավորանքների համար:

Թող մարդացյալ Տերը խաղաղություն պարգևի աշխարհին և միություն՝ Իր եկեղեցուն, որին փրկեց Իր սուրբ արյունով:

Այս ուրախ առիթով ցանկանում ենք, որ մեր երկու բույր եկեղեցիների սիրո և եղբայրության կապերը է՛լ ավելի ամրապնդվեն Աստուծո փառքի համար, էկումենիկ ոգով:

Ձերդ Սրբության ի Քրիստոս եղբայր՝

ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ

Պատրիարք Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի

ԱԼԵԿՍԱՆԴՐԻԱ

*
* *

Շատ ուրախ եղանք ստանալով տոնական Ձեր նամակը՝ լի սիրով, բարեմաղթություններով և ողջույններով:

Որպես պատասխան, ջերմ շնորհակալություն ենք հայտնում Ձերդ Սրբության զգացումների և բարեմաղթությունների համար:

Ծննդյան սուրբ Այրից ջերմորեն աղոթում ենք և հայցում մարդացյալ Տիրոջը՝ ամրապնդելու եղբայրական սերը Իր բոլոր եկեղեցիների միջև, միություն բերելու բոլորին, խաղաղություն հաստատելու աշխարհի վրա և բարյացակամություն՝ բոլոր մարդկանց հանդեպ:

Թող մեր աղոթքները լսելի լինեն, որպեսզի ամբողջ նոր տարվա ընթացքում երկնային օրհնություններով լցվի մեր կյանքը:

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ

Պատրիարք հունաց Երուսաղեմի

ԵՐՈՒՍԱԼԵՄ

*
* *

Ձերդ Սրբություն.

Անձնապես Մեր և Անտիոքի ու համայն Արևելքի առաքելական եկեղեցու հոգևոր դասի և ողջ հաւատացյալների անունից սրտագին շնորհակալություն ենք հայտնում Ձերդ Սրբությանը ա. Ծննդյան տոնի առթիվ Մեզ հղած Ձեր պատվական ուղերձի համար և փոխադարձաբար Մեր ջերմագին շնորհավորանքներն ենք հղում Ձեզ՝ մատթելով Ձերդ Սրբությանը, ինչպես նաև ձեր սուրբ եկեղեցու եպիսկոպոսական դասին և հոգևոր հոտին՝ երջանկություն, բախտավորություն և հաջողություն:

Աղաչում ենք մեր Փրկչին՝ աշխարհի մեղքերը կրողին, որ օրինի 1970 թվականը, որպեսզի Նրանով պատմության մեջ արձանագրվի մի նոր ժամանակաշրջան՝ լի երկնային շնորհներով, արդարությամբ, սիրով և տևական խաղաղությամբ՝ ի բարօրություն և հուրախություն երկրագնդի բոլոր ժողովուրդների:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԹԵՈԳՐԱՄԻՈՍ Զ.

Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի

Դ Ա Մ Ա Ս Կ Ո Ս

•
•

Ձերդ Սրբություն.

Մասնավոր ուրախությամբ և խորին երախտագիտական զգացումներով ստացանք և կարդացինք Ձեր սիրալիկ նամակը, որով ցանցացել էիք, մեր Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ Ծննդյան տոնի առթիվ, Մեզ հղել Ձեր շնորհավորանքներն ու բարի մաղթանքները:

Մեծապես զգացված Ձեր ազնիվ սրտի այնքան զգալուն արտահայտություններից, Մենք ևս կցանկանայինք, 1970 շնորհաբեր տարվա սեմին, նույնպիսի զգացումներ հայտնել Ձեզ՝ Մեր եղբայրական սիրո սուրբ համբույրը տալով Ձեզ և միաժամանակ արտահայտելով Ձեր անձի նկատմամբ Մեր ունեցած բարձր հարգանքն ու անկեղծանքը:

Աստվածահայտության մոտալուտ տոնի առթիվ Մեր ջերմագին աղոթքներն ուղղում ենք դեպի Բարձրալի գահը՝ Ձեր սիրելի անձի, Ձեր հովվապետական և սուսբելական բազում և բազմապիսի գործունեության, ձեր սուրբ եկեղեցու եպիսկոպոսների, քահանայից դասի, բոլոր հավատացյալների, մեկ խոսքով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության համար՝ հայցելով երկնային ու երկրային անսահման միփոքարություն և աստվածային առատ օրհնություններ:

Մեր աղոթքները միացնում ենք Ձեր աղոթքներին, որպեսզի Քրիստոսի վառած եղբայրասիրության լույսը շողա բոլոր եկեղեցիների միջև, և խաղաղությունն ու արդարությունը վերահաստատվեն աշխարհի վրա բոլոր ազգերի միջև:

Վերստին հայտնելով Ձեզ Մեր սրտաբուխ մաղթանքները, խնդրում ենք ընդունել, շատ սիրելի Եղբայր, Մեր հարգալից և եղբայրական սիրո զգացումներն ի Քրիստոս:

ԻԳՆԱՏԻՈՍ Ա. ՀԱՅԵԿ Բ

Պատրիարք Անտիոքի սիրիական կաթոլիկ եկեղեցու

ԲԵՅՐՈՒԹ

•
•

Ս. Ծննդյան տոնի առթիվ Ձեր պատգամը ստացվեց ուրախությամբ: Մենք խորապես ուրախ ենք Ծննդյան և Նոր տարվա Ձեր ողջույնների ու բարեմաղթությունների համար և աղոթում Փրկչին՝ Ձեզ պարգևելու քաջատոջություն և երջանիկ հովվապետություն այս տոնական օրերի շնորհներով:

Ձերդ անկեղծորեն ի Քրիստոս՝

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ

Պատրիարք Սիրիայի օրթոդոքս եկեղեցու
և համայն Արևելքի

Դ Ա Մ Ա Ս Կ Ո Ս

Զերդ Սրբություն.

Մեր Տիրոջ ծննդյան խորհուրդը լրացրեց աստվածային խոստումը՝ փրկության համար՝ վերանորոգելով և եղբայրացնելով ամբողջ մարդկային ազգը:

«Ծննդան ի Հօրէ նախքան զստեանս», «թող ուղղի մեր ոտքերը դեպի խաղաղութեան ճանապարհը» (Ղուկ. Ա. 69—70):

Մենք քրիստոնյա հավատացյալների բարձրաստիճան հոգևորականներս, պարտականությունը ունենք մեր հոգևոր որդիներին բարոգելու Աստուծո սերն ու ողորմությունը և ճշմարտությունը:

Աղոթենք և աշխատենք աշխարհի խաղաղության և մարդկանց մեջ բարի կամեցողության հաղթանակի համար:

Այս մտքերով և հույսերով, ս. Ծննդյան առիթով ամբողջ սրտով բարեմաղթում ենք Զերդ Սրբության քաջատողջություն և հոգևոր ուրախություն և երջանիկ հովվություն 1970 թվականի ընթացքում: Մարդացյալ Աստվածորդին Իր անհամար ողորմությունը թող պարգևի հոգևոր դասին, ձեր սուրբ եկեղեցու հավատացյալներին՝ երջանկություն, հաջողություն, իսկ ամբողջ մարդկությանը՝ Իր ճշմարիտ և սուրբ խաղաղությունը:

Կամանք Զերդ Սրբության անձնվեր սիրող եղբայր և Զեզ կողջունենք և կհամբուրենք ի մարմնացյալն Քրիստոս:

ԺՈՒՍԽԻՆԻԱՆ

Պատրիարք Ռոմիկայի

ԲՈՒԽԱՐԵՍՏ

Զերդ Սրբություն.

«Եւ Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ»:

Այս բառերով է, որ սուրբ Հովհաննես առաքյալը մեզ բերում է մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մարդեղության խորհրդի ավետիսը: Դարերից ի վեր քրիստոնյա ժողովուրդը ամեն տեղ գնծությամբ է ընդունել Աստուծո սիրուն այս մասնավոր հայտնությունը մարդկության հանդեպ: Այդ գնծության ոգով Մենք էլ ողջունում ենք Զեզ, սիրելի Եղբայր, Ծննդյան այս սուրբ օրերին:

Սուրբ Հովհաննես առաքյալը մեզ ավելին է պատմում. «Եւ տեսաք զփառս Նորա, զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ»: Այդ փառքը, արդարև, բողարկված էր մարմնի մեջ, բայց հայտնի դարձավ հավատքի աչքերի համար, այնպես որ հովիվները և մոգերը շտապեցին Բեթղեհեմ՝ երկրպագելու ոչ թե մի մանուկի, այլ ամբողջ արարչագործության Տիրոջ:

Այսօր, ինչպես առաջին Ծննդյան առավոտը, փառքը պահված է, և շատերը չեն տեսնում այն: Մենք տխրությամբ ենք համակվում, երբ տեսնում ենք, որ շատերը անտարբերությամբ են անցնում այս ճշմարտության կողքով: Արդարև, մենք բոլորս էլ զգում ենք հանցանքի ճնշումը մեզ վրա և մտածում ենք, թե որքան քիչ ջանք ենք թափել, դարերից ի վեր, իրագործելու Տիրոջ հրամանը՝ բոլոր ազգերին Քրիստոսի աշակերտ դարձնելու մասին: Բայց մեր

զղջումի և մեր մի շարք թերացումների համար Աստված մեզ տալիս է վստահ և ստույգ հույսի միջնադարեր: Նա, որի մարդկությունը ողջունում ենք մենք այս օրերին, Տերն է ողջ արարչագործության, և Տերը բոլոր ժամանակների և հավիտենության: Արդարև, ինչքան գեղեցիկ է ամել սուրբ Աթանասը. «Աստուծո Խոսքը՝ Բանը, մարմին առավ, որպեսզի մարդը կարենա ստույգ-նանայ»:

Մարմնացյալ Փրկչի հաղթանակի վստահ և ստույգ հույսով ողջունում ենք Ձեզ, սիրելի Եղբայր, այս Ծննդյան տոնի ուրախ ստիթով: Աղոթում ենք, որ Աստված առատորեն օրհնի Ձեզ, ինչպես նաև հայ եկեղեցու հոգևորականներին և ձեր հավատացյալ ժողովրդին:

Եղբայրական սիրով և ողջույններով, Ձեր սիրելի Եղբայր ի Քրիստոս՝

ՄԱՅԲԼ ՌԵՄՁԻ

Արքեպիսկոպոս Փենտրերբիի, Եպիսկոպոսապետ
և միտրոպոլիտ համայն Անգլիայի

Լ ՈՆ Դ ՈՆ

•
•

Ձերդ Սրբություն.

Մեր Տերը և Փրկիչը մարմնացավ, որպեսզի Իր մեջ և Իրենով նորոգի ամեն ինչ և փրկի մանավանդ մարդկային ցեղը: Նրա թանկագին և կենարար շնորհներն են խաղաղությունը, ուրախությունը, սրբագործությունը և պայծառ լույսը:

Այս ամենամեծ տոնի առթիվ ցանկանում եմ Ձեզ հղել իմ անկեղծ բարեմաղթությունները և աղոթել առ Աստված, որպեսզի խաղաղությունը թագավորի երկրի վրա, և մարդկությունը, որ հուշակում ու փառավորում է Փրկչին, ընդունի Նրա առատարուխ շնորհները:

Թող մեր Տերը շնորհի Ձերդ Սրբությանը, ձեր հոգևոր դասին և ձեր հավատացյալ ժողովրդին այն ամենը, ինչ Դուք ցանկանում եք:

Ողջագուրում եմ Ձեզ սիրով և խնդրում եմ Ձեզ ընդունել իմ եղբայրական զգացմունքների հավաստիքը:

ՀԵՐՈՆԻՄՈՍ

Արքեպիսկոպոս Աթենքի և համայն Հունաստանի

Ա Թ Ե Ն Ք

•
•

Ձերդ Սրբություն.

Սրտագինա ողջունում եմ Ձեզ՝ Քրիստոսի ս. Ծննդյան առթիվ:

Գալիք՝ 1970 թվականը թող Քրիստոսի եկեղեցու և երկրի բոլոր բնակիչների համար լինի խաղաղության և պտղաբերության տարի: Ծնվող Տերը թող օրհնի Ձերդ Սրբությանը, պահպանի բազում տարիներ՝ ի փառս քրիստոնեական եկեղեցու:

ՍՏԵՖԱՆ

Միտրոպոլիտ Վարչափայի և համայն Լեհաստանի

Վ Ա Ր Շ Ա Վ Ա

Ձերդ Սրբություն.

Նորից, ինչպես անցյալ տարիներին, Աստուծո ողորմությունը մեզ մոտեցրեց խորհրդավոր օրվան, երբ երկնային Հոր բարեհաճությամբ Աստուծո Որդին մարդացավ՝ մարդկանց բարօրության համար:

Իր մարդեղությամբ Տերը մեզ Իր սերը ցուցաբերեց: Երկնային Հոր ուղարկած այդ շնորհները այս տոնական օրերին մեզ ոգևորում են և ուրախությանը լցնում մեր հոգիները:

Այս օրերին մեկս մյուսիս շնորհավորելով, մենք խորը հիացմունքով մեր ձայնը միացնում ենք հրեշտակների փառաբանական ձայնին, որ երգեցին մեր Փրկչի ծննդյան գիշերը. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ձերմ սիրով և հարգանքով սրտագինս ողջունում եմ Ձեզ և շնորհավորում Ձերդ Սրբությանը և ձեր Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցուն՝ ս. Ծննդյան և Ամանորի առթիվ:

Ամենայն խոնարհությամբ աղոթում ենք մեր Տիրոջը, որպեսզի Ձերդ Սրբությանը պարգևի առողջություն, երկար կյանք՝ ի պայծառություն և բարօրություն Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու և երկրի վրա խաղաղության հաստատման համար:

Ձերդ Սրբության նվիրյալ ի Քրիստոս՝

ԴՈՐՈՅԵՅ

Մխարպովիտ Պրագայի և համայն Չեխոսլովակիայի

Պ Ր Ա Գ Ա

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն»:

Հրեշտակներուն այս ավետիսով է որ կու գանք Ձեզի հայտնելու Մեր եղբայրական չերմ շնորհավորությունները, Ամանորի, սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոներու առթիվ, մաղթելով բարօրություն, երջանկություն, բազմաթիվ հոգևոր և ժամանակավոր մխիթարություններ և գործոց հաջողություն:

Տարին կսկսինք «Խաղաղութեան Համաշխարհային օրով»: Իցիվ թե Արդարության Արեգակին հետ երկրիս վրա ծագած խաղաղությունը վերստին տարածե իր ճառագայթները համայն աշխարհի վրա, հրավիրելով մարդիկը հիմնելու, Աստուծո և ընկերին սիրույն վրա, իրենց փոխադարձ հարաբերությունները:

Մենք կաղոթենք որ այս պայծառ Արեգակը լուսավորե ամենուրեք՝ հայ ազգին զավակները՝ որպեսզի, խաղաղության պտուղները վայելելով, մայր հայրենիքին մեջ և ի սիրտուս աշխարհի, կարենան հառաջդիմել և երջանիկ ըլլալ:

Հաճեցեք, Վեհափառ Տեր, ընդունիլ Մեր եղբայրական և հարգավիր ողջույնները:

ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԶ ՊԱԹԱՆՅԱՆ

Պատրիարք կաթողիկոս հայոց

Ք Ե Յ Ր Ո Ւ Թ

«Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, զի յայց ել մեզ, եւ արար փրկութիւն ժողովրդեան իւրում» (Ղուկաս Ա 68):

Սուրբ Ծննդյան տոնի առթիվ հղում եմ Ձեզ ուրախության պատգամն աստիճանային փրկագործության՝ ի ձեռն Հիսուսի Քրիստոսի:

ԲԼԵՅԿ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի
ընդհանուր քարտուղար

Փ Ն Ե Վ

Ձերդ Սրբություն.

Ս. Ծննդյան տոնի առիթով հայտնում եմ իմ սրտագին բարեմաղթությունները Ձեզ՝ Ամենայն Հայոց Հայրապետիդ, և ցանկանում, որ մեր եղբայրական համագործակցությունը ի Քրիստոս ամրապնդվի՝ ի փառս մեր քրիստոնեական սուրբ հավատքի և ի բարօրություն համայն մարդկության, որպէսզի Քրիստոսի խաղաղությունն ամրանա բոլոր ժողովուրդների միջև, և վերանան չարիքն ու մեղքը:

Միշտ սիրով և անձնասպէս հիշելիս Ձեր այցելությունը Վիեննա՝

ՅՐԱՆՑ ԳՅՈՒՆԿ

Արքեպիսկոպոս Վիեննայի

Վ Ի Ե Ն Ն Ա

Ձերդ Սրբություն.

Եղբայրական սիրո և ուրախության զգացումով սրտագինս ողջունում եմ Ձերդ Սրբությանը՝ ս. Ծննդյան տոնի և Ամանորի առթիվ:

Աղոթելով, ցանկանում եմ Ձեզ քաջատողջություն, երջանկություն՝ ի բարօրություն Ձեզ և հայ հին եկեղեցուն:

«Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ՝ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն» (Ղուկ. Բ 14):


Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍ

Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուսերական
եկեղեցու արքեպիսկոպոս

Ռ Ի Գ Ա

Ձերդ Սրբություն.

Ընդունեցեք իմ սրտագին շնորհավորանքները՝ ս. Ծննդյան տոնի և Ամանորի առթիվ: Ձեր եկեղեցաշէն գործունեության մեջ Ձեզ ցանկանում եմ քաջատողջություն, հաջողություն:



Մարդացյալ Քրիստոսը թող ամրապնդի խաղաղությունը ժողովուրդների միջև և առատորեն պարգևի Իր շնորհները ողջ մարդկությանը:

Ձերդ Սրբությանը նվիրյալ եղբայր ի Քրիստոս՝

ԱՄՖՐԵԴ ՏՈՈՄԻՆԳ.

Էստոնական ՍՍՀ ավետարանական-լուսերական
եկեղեցու արքեպիսկոպոս

Տ Ա Լ Լ Ի Ն

•
• •

Վեհափառ Տեր.

Նոր տարիի և մեր Տիրոջ Քրիստոսի ա. Ծննդյան տոնական օրերուն աղթիվ մեր խորհուրդները մասնավորապես կողովին դեպի Էջմիածին՝ Իջման սեղանին՝ ուր Աստուծո Որդին ինքզինք մասնավորապես հայտնեց և այդ հայտնությունեն լուսավորվեցալ մեր սիրեցյալ ազգն հայոց, և այսօր այդ լույսը կշողափայլի Ձեր Սրբության Հայրապետական մականին տակ: Մեղադրքն ու մաղթանքն է Ձեր վաթսունամյա տարեդարձին՝ արևշատություն ու Աստուծո առատ օրհնությունները՝ որպեսզի ա. Լուսավորիչի ջանք միշտ վատ մնա ի պայծառություն հայ առաքելական եկեղեցվո և ի լուսավորություն բովանդակ հայ ազգին մայր հայրենիքի մեջ և այլուր:

Կմաղթենք որ Խաղաղության Իշխանը Իր ներգործությամբ գոտեպնդե մեզ հավատարիմ ծառաներ ըլլալու և հաշտության ու խաղաղության հոգին պարգևե համայն աշխարհի: Օրհնյալ ըլլա Քրիստոսի ծնունդը:

«Երկինքի բարձրության մեջ Աստուծոյ փառք, ու երկրի վրայ խաղաղություն, մարդոց մեջ հանություն»:

Եղբայրական սիրով և հարգանք, Ձերդ՝ Քրիստոսի ծառայակից՝

ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ Փ. ԱՀԱՐՈՂՅԱՆ

Նախագահ Մերձավոր Արեւելքի հայ ավետարանական
եկեղեցիներու միության

Բ Ե Ե Ր Ո Ւ Թ

•
• •

Ձերդ Սրբություն.

Ձեր նամակի ընտիր արտահայտությունները, մտածման և ոգեկանության իրենց վեհությամբ, մի անգամ ևս համակեցին ինձ ակնկալվածից ավելի և մարդկանց խաղաղության համար դժվարին այս ժամանակներուն ճշմարիտ մխիթարություն հանդիսացան ինձ համար, ինչպիսին կհանդիսանար առաքելական մի նոր թողութ:

Խորապես շնորհակալ եմ Ձերդ Սրբությանը այն ազնիվ ցանկությունների և բարեմաղթությունների համար, որ բարեհաճել էիք հղել ինձ այնքան հեռավոր, բայց և այնքան մոտիկ ու այնքան սիրելի Հայաստանից:

Միացնելով իմ խոնարհ աղոթքները Ձերդ Սրբության աղոթքներին, հաղթում եմ Տիրոջ շնորհները վասն խաղաղության ամենայն աշխարհի:

Ձերդ Սրբությանը ներկայացնելով իմ անկեղծ և խոնարհ հարգանքները, ինչպես նաև իմ բարեմաղթությունները Ձեր քաջատուղջության և ձեր եպիսկոպոսների, քահանաների և հավատացյալ ժողովրդի երջանկության համար, խնդրում եմ Ձեզ ընդունել իմ հարգալից սիրո ամենաշերտ զգացումները:

ԺԱՆ ՌՅՈՒՊ

Եպիսկոպոս Մոնակոյի

Մ Ո Ն Ա Կ Ո

*
* *

Ձերդ Սրբություն.

Հաճեցեք ընդունել իմ եղբայրական բարեմաղթությունները՝ սուրբ Ծննդյան և Ամանորի առթիվ: Ցանկանում եմ Ձեզ երջանկություն, բախտավորություն:

ԿԱՐԳԻՆԱՆ ԱՂԱԶԱՆՅԱՆ

Վ Ա Տ Ի Կ Ա Ն

*
* *

Վեհափառ Տեր.

Մեծ և սքանչելի խորհուրդին աստվածային լույսով և շնորհապալով պարգևներով առեցուն, հաճույքով կու գամ Ձերդ Վեհափառության և ս. Էջմիածնի Ռամոսեն ուխտիդ ներկայացնելու միաբանությանս և իմ ջերմ բարեմաղթությունները, մերձավոր սուրբ Ծնունդի և Ամանորի բարեպատեն ստիքներով:

Բեթլեհեմի քարայրին մեջ ծնած նոր Արքան՝ խաղաղության հզոր Իշխանն է, արդարության Արեգակն ինքնին: Թող Անոր պայծառ շողերը փարատեն ամեն միայր ու խոշ՝ լուսավորելու համար բոլոր արարածները. և մարդկությունն համայն, գերթ խոնարհ հովիվներն ու աստվածավախ մոգերն արևելքի, երկրպագե ճշմարիտ Լույսին, որ Հորմեն ծագեցավ և սուրբ կույսեն մարմնացավ:

Այս զգացումներով համակված, քաղցր է մեզի հոգերուխ աղոթքներ բարձրացնել առ նորածինն Հիսուս՝ Ձերդ Վեհափառության կենաց և արևշատության համար, մաղթելով իրագործում Ձեր բոլոր սուրբ իղձերուն, աստվածահաճու և ազգանվեր ծրագիրներուն, ի պայծառություն ս. եկեղեցվո և մեր ժողովուրդին:

Ամենախորին մեծարանքով՝

Հ. ՀՄԱՅԱԿ ՎԱՐԳԱՊԵՏ ԿԵՏԻՎՅԱՆ

Ընդհ. արքանայր Մխիթարյան միաբանության

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

*
* *

Վեհափառ Տեր.

Ձեր օրհնությունաբեր գրին ու մաղթանքներուն համար կհաշտեն խորին շնորհակալությունս:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, որ Փրկչին ս. Ծննդյան տոնին և Ամանորյա առիթով մաղթեմ Ձեզի՝ փոխադարձաբար, երկնառաք օրհնությամբ՝ խնդություն անխտով, առողջություն անասան, հաջողություն անխափան, բերրի գործունեություն հարանուն և շինարար, Աստուծո ժողովուրդին մեջ հունձք պտղատատ և արևշատության տարիներու երկար շարք մը:

Աղոթանվեր մաղթանքով կհայցեմ Նորածին աստվածային Մանուկեն, որ մամայն աշխարհը լսե հրեշտակներու ավետիսը և երկրիս վրա՝ հոգիներու մեջ ամենուրեք տիրե խաղաղությունը, «որ ի վեր է քան զմիտս»:

Թող հավատացյալ հայ ժողովուրդը հայրենիքի մեջ և ի սփյուռս աշխարհի՝ բոլորե անդորր ու բարգավաճ, 1970 տարին:

Փառք ի բարձունս, խաղաղություն երկրի վրա, խնդություն հոգիներու:


Հարգանքի ջերմ զգացումներով մնամ Վեհափառ Տերությանդ աղոթակից՝


ՄԵՍՐԻՊ ՀԱՊՈԶՅԱՆ

Արքեպ. և Ընդհ. աքբահայր

Մխիթարյան միաբանության

ՎԻԾՆՆԱ





ՍՐԲՈՑ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 3-ին, երեքշաբթի.—Տօն Սրբոց Ղտկոյանց քահանայից:

Սրբոց Ղտկոյանց քահանայից տոնը՝ տոնն է մի խոսք հայ հոգևորականների, տոնը Ե դարում հայոց պատմության նշանակալից ու ճակատագրական մի դեպքի՝ արքայանանց հերոսամարտի ոգեշնչողներն առաջնորդողներն եղան՝ կանգնած հայ-ճանապետ անխարսքների ու ուխտապան կազմիկների կողքին:

Ս. Ղտկոյանց տոնը մասնավորաբար վերաբերվում է հայ քահանայից դասին, որովհետև սա մի տոն է, որը առիթ է տալիս քահանային տարին մի անգամ ամփոփվելու ինքն իր մեջ, խորհրդածելու, ինքն իրեն անսեմատության մեջ դնելու այն քահանայների հետ, որ Ե դարի կեսերին մեկ ձեռքում առաջ, իսկ մյուսում՝ սուր, «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց» անհատականության լուսն շրակն ընդունեցին: Այս վերհիշումները չթափանառ կդառնան, որ հայ քահանան վերանորոգվի, լցվի սուրբ Ղտկոյանց եռանդով ու ավյունով, ոգով ու հավատքով, ծառայասիրությամբ ու զոհողությամբ ոգով:

Պատահական չէ, որ մեր եկեղեցական հայրերը փետրվար ամսում, մեր եկեղեցական օրացույցի մեջ, գեղեցիկ մտածումն են ընկնեցել՝ մասնավոր կարևորությամբ համարելու հայ եկեղեցուն միայն հատուկ ազնային-եկեղեցական տոների շարքը, տոներ, որոնք սերտորեն կապված են հայ հավատի, այս ժողովրդի ու հայրենիքի հետ:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ այս երրորդ տարին է, ինչ Ս. Ղեվոնդյանց տոնը Մայր Աթոռում նշվում է քաջադիպ հանդիսավորությամբ ու առանձին ծրագրով, որին մասնակցում են Արարատյան, Ծիրակի, Վրաստանի, Բաքվի, Հյուսիսային Կովկասի թեմերի ողջ քահանայից դասը: Այս տարի նույնպիսի կարևորությամբ նշվեց Ս. Ղտկոյանց տոնը:

Հանձնախումբը, որի կազմի մեջ մտնում էին՝ տ. Հուսիկ եպս. Սանթրուքյանը (նախագահ), հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ծնորհք վրդ. Գասպարյանը և Գեղարդի վանքի վահանալոր տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը, անխառն հոգ էր տարել՝ կազմելով տոնակատարության ծրագիրը:

Ժամանում: Փետրվարի 2-ին, երկուշաբթի օրը, ժամը 12-ին, հրավիրված բոլոր քահանաները արդեն ժամանել էին Մայր Աթոռ ս. Էջմիածին և Իջման ս. սեդանի առաջ կատարել իրենց ուխտն ու աղոթքը:

Նախատոնակ: Փետրվարի 2-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 17-ին, կատարվում է երեկոյան ժամերգություն Մայր տաճարում և ապա Ղտկոյանց Նախատոնակը՝ հանդիսավորությամբ Վեհափառ Հայրապետի:

Ս. Ս. Օծությունը քահանայից թափորով առաջնորդվում է Մայր տաճար և նախագահում՝ Նախատոնակի հանդիսությունը: Օրվա երգեցողությունը կատարում են քահանա հայրերը:

Նախատոնակից հետո քահանա հայրերին բարի գալուստ է մաղթում Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը, վերադառնալով Մայր Աթոռում հանդիսությանց հրավիրված քահանաների համախմբման եկեղեցական-հոգևոր նշանակությունը: Սրբազան հայրը քահանա հայրերի ժամանումը Մայր Աթոռ ողջունելուց հետո, բոլոր ներկաների անունից շնորհակալություն և երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Նրա բարեհաճ կարգադրության համար քահանաների հրավիրման կապակցությամբ:

Հավարտ Նախատոնակի, Հայրապետական թափորը առաջնորդվում է Վեհարան: Աջահամբույրով Մայր Աթոռի միաբանությունն ու քահանայից դասը ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Երեկոյան, ընթրիքից հետո, ժամը 20.30-ին, Վեհարանի դահլիճում ցուցադրվում է «Հայ տպագրությունը» կարճամետրաժ և «Հյուսիսային ծիածան» կինոնկարները: Ցուցադրությանը ներկա էր նաև հոգևոր ճեմարանի ուսանողությունը:

Ս. պատարագ և քարոզ: Փետրվարի 3-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 8-ին, Մայր տաճարում պաշտվում է առավոտյան ժամերգություն, որին մասնակցում են Մայր Աթոռի ողջ միաբանությունը, քահանայից դասը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը: Ժամերգությանը անմիջապես հետևում է ս. պատարագը:

Ս. պատարագին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

Օրվա պատարագից էր Երևանի ս. Սարգիս եկեղեցու ալագերեց տ. Թադեոս քհն. Զմրուխտյանը: Քարոզեց Կիրովականի ս. Աստվածածին եկեղեցու տ. Վազգեն քհն. Կարազյուզյանը:

Դասախոսություններ հոգևոր ճեմարանում: Ժամը 13-ին Մայր Աթոռի միաբանությունն ու քահանա հայրերը հավաքվում են հոգևոր ճեմարանի հանդիսարանում, որ կարդացվում են երկու դասախոսություններ:

Նախագահում էր տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը: Ներկա էին նաև տ. Կոմիտաս, տ. Մաշտոց և տ. Վահան թեմակալ եպիսկոպոսները և Նոր Նախիջևանի թեմի հոգևոր հովիվ տ. Գրիգորիս արքեպ. Բումիաթյանը:

Բացման խոսք ասաց տ. Հուսիկ եպիսկոպոսը, նշեց օրվա քահանայական հավաքույթի կարևորությունը:

Ապա բարիգալատյան ջերմ խոսք ասաց հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը և ողջունեց քահանա հայրերի ներկայությունը հոգևոր ճեմարանի հարկի տակ:

Առաջինը դասախոսությամբ հանդես ե-

կավ Հյուսիսային Կովկասի Օրջոնիկիձե բաղաքի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տ. Կարապետ քհն. Քիլիճյանը: Նրա դասախոսության նյութն էր՝ «Քահանայի հովվական առաքելությունը մեր կյանքի արդի պայմաններում»: Դասախոսությունը, որ պատրաստված էր իմամբով, ունկնդրվեց հետաքրքրությամբ:

Երկրորդ դասախոսությունը կարդաց Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ալագերեց տ. Գրիգոր քհն. Անանյանը, որի նյութն էր՝ «Ավետարանը և ժողովրդի բարոյական դաստիարակությունը»: Դասախոսությունը սիրով ունկնդրվեց ճեմարանի կողմից:

Ժամը 15.30-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Վեհարանի մուտքի առաջ լուսանկարվել քահանա հայրերի հետ:


Ժամը 16-ին միաբանական սեղանատանը ճաշկերույթ է տրվում՝ ի պատիվ քահանա հայրերի:

Ժամը 18-ին, հավարտ երեկոյան ժամերգության, ճեմարանի դահլիճում տեղի է ունենում գրույց և կարծիքների փոխանակություն եկեղեցական, ծիսական և հոգևոր դաստիարակության հարցերի շուրջ, որին մասնակցեցին բոլոր քահանա հայրերը՝ ելնելով իրենց եկեղեցական, ծիսական գործունեության փորձից: Սույն գրույցը և կարծիքների փոխանակությունը վարեց տ. Շնորհք վրդ. Գասպարյանը:


Զրույցի ավարտին տ. Հուսիկ եպիսկոպոսը գոհունակություն և շնորհակալություն հայտնեց ներքին թեմերի բոլոր քահանա հայրերին, որոնք սիրով ընդառաջել էին Մայր Աթոռի հրավերին և եկել՝ միասին տունելու Ս. Ղևոնդյանց տունը և հոգևոր հայրենասիրական երկ լիցք ստանալու համար: Նախագահող սրբազանը սրտագին հաջողություններ մաղթեց բոլոր քահանաներին՝ իրենց եկեղեցաշեն ու հայրենակներ գործունեության ասպարեզում, շնորհավորելով մասնավոր երկու քահանա հայրերին՝ նրանց պատրաստած դասախոսությունների բարձր մակարդակի և բոլոր քահանա հայրերին՝ իրենց սիրալիր մասնակցության համար գրույցին և կարծիքների փոխանակությանը:

Խմբովին երգված «Հայր մեր»-ով ավարտվում է օրվա հանդիսությունը հոգևոր ճեմարանի հարկի տակ:

Վեհափառ Հայրապետի մոտ: Ժամը 21-ին, ընթրիքից հետո, Վեհարանի ընդունարանում Ամենայն Հայոց Հայրապետը բարեհաճեց ընդունել քահանա հայրերին՝ տալու իր հայրապետական օրհնությունն ու պատգամը Սրբոց Ղևոնդյանց քահանաների տոնի Աթոռ Ռիսի տեղում կայացած երեքին թեմերի քահանայից դասին:



ՎԵՐԱԲԱՆԱԿԱՆ ԹԵՄԱԽԱՆ ԱՌԱՋԱՆՈՂՆԵՐԸ, ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՆԵՐԸ, ԵՎ ՀԱՆԴԱՍԻԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՔԱՀԱՆԱՅԷ ՀԱՅՐԵՐԸ



Ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, տ. Կոմիտաս, տ. Մաշտոց, տ. Վահան խաչիկությունները:

Տ. Հուսիկ եպիսկոպոսը խոսելով օրվա միավարության նշանակության մասին, խնդրեց Վեհափառ Հայրապետին տալ իր օրհնությունն ու պատգամը:

Նորին Սրբությունը ջերմորեն ողջունեց մերկալությունը թեմակալ առաջնորդների, Մայր Աթոռի միաբանության և քահանայից պառնի և իր խոսքի մեջ շեշտեց քահանայական առաքելության բարոյական գեղեցկությունը և նշանակությունը մեր ժողովրդի կյանքում, ապա կոչ արեց մնալ հավատարմիս իրենց ուխտին, հավատով ծառայել Աստծուն և հավատացյալ հայ ժողովրդին, յորի հոգևոր սպասավորության են կոչված:

Արդարև, վսեմ է քահանայի կոչումը: Քահանայությունը սրբազան ծառայություն է, մեկնական և բարձրագույն կոչում, որ, ինչպես նշել է Ներսես Շնորհալի Հայրապետը, Աստված հրեշտակներին իսկ չվստահեց, մեզեց Հայոց Հայրապետը: Ուրեմն ամեն մի քահանա պարտավոր է խղճմտանքով կատարել իրեն վստահված սուրբ գործը՝ ի շինություն հայ ժողովրդի հոգևոր կրթության և ի պայծառություն մեր սուրբ եկեղեցու:

Իր պատգամի ավարտին Հայոց Հայրապետը բաշխելով իր օրհնությունը բոլոր ներկաներին, բարեմաղթեց, որ սրանից հետո ևս ներքին թեմերի քահանա հայրերը հաջողությամբ և պատվով կատարեն իրենց հանձնված՝ մեր ժողովրդի հոգևոր, հայրե-

նասիրական, դաստիարակչական պատասխանատու գործը և լինեն «մշակք առանց ամօթոյ», մոտափայար ունենալով միշտ Ղեկնչյանց քահանաներին, որոնց նահատակությամբ «պայծառապես լուսաորեցան եկեղեցիք Հայաստանեայց»:


Հանուն քահանա հայրերի, Արարատյան թեմից տ. Զարեհ քհն. Բաումանյանը որդիական երախտագիտության և շնորհակալության խոսք է արտասանում՝ ողջված Վեհափառ Հայրապետին, Նրա հայրական ջերմ վերաբերմունքի ու բարձր հոգատարության համար:

Նորին Սուրբ Օծությունը այս առթիվ բոլոր քահանա հայրերին նվիրում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարանում վերջերս հրատարակված Նոր Կտակարանի (չորս Ավետարաններ և Գործք առաքելոց) աշխարհաբար թարգմանության մեկական օրինակ:

Սրբոց Ղեկնչյանց տոնի առթիվ Մայր Աթոռում կազմակերպված միջոցառումները ավարտվում են Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ու խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Հաջորդ օրը, փետրվարի 4-ին, առավոտյան, քահանա հայրերը հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից ու Մայր Աթոռից և մեկնում իրենց ծառայության դաշտը՝ շարունակելու համար իրենց լուսավոր առաքելությունը ի պայծառություն Հայաստանյայց եկեղեցու և հայ ժողովրդի:

ՆՈՎՀԱՆՆԵՍ ՍՐԿ. ԳԸՎԸԳՅԱՆ





Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 5-ին, հինգշաբթի օրը, Մայր Աթոռում, ինչպես միշտ, այս անգամ ևս առանձին հանդիսավորությամբ նշվում է տոնը «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին»:

Փետրվարի 4-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում կատարվում է Վարդանանց Նախատոհմակը: «Նորահրաշ պատկառ» շարականի տպավորիչ երգեցողությամբ մի անգամ ևս բոլորի սրտերում պայծառանում են հայրենիքի և հավատքի անվեհեր մարտիկների անունները:

Փետրվարի 5-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամերգությունը պաշտվում է Մայր տաճարում:

Ժամը 11.30-ին սկսվում է ա. պատարագը, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և հավատացյալների հոծ բազմությունը:

Հոգևոր ճեմարանի երգեցիկ խումբը, կատարում է պատարագի կոմիտայան երգեցողությունը:

Ժամը 12-ին թափորով Մայր տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը:

Օրվա պատարագիչն է տ. Գևորգ վրդ. Սերադյաբլանը:

«Հայր մեր»-ից առաջ կատարվում է հոգեհանգիստ, «խան համօրէն ննջեցեցոց»:

Հավարտ ա. պատարագի Իշման ա. սեղանի առաջ կատարվում է հայրապետական մատթանը, որովհետև նույն օրը նաև Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնն է:

Քարոզում է Մայր տաճարի փոխ-լուսա-

րարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանը և ոգեկոչում ա. Վարդանանց խնկելի հիշատակը՝ շնորհավորելով նաև Վեհափառ Հայրապետի անվանակոչությունը, արտագին բարեմաղթություններ անելով Նրա կյանքի արեւատության, Մայր Աթոռի պայծառության և անասանության համար:

Նույն օրը, ժամը 13.30-ին, հոգևոր ճեմարանի դահլիճում, Վարդանանց տոնի հիշատակին, կազմակերպվում է գրական-գեղարվեստական հանդես, որին նախագահում է Վեհափառ Հայրապետը:

Հանդիսությունը բացվում է Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագով: Ապա ճեմարանական խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը:

Գ լսարանի ուսանող Ղազարոս սրկ. Կյուրեղյանը արտասանում է Եղիշեի «Տիկնաք փառիկատունք» հատվածը, Գ դասարանի ուսանող Վրեժ Նանարյանը՝ Վ. Թեքելյանի «Խորհուրդ Վարդանանց» բանաստեղծությունը, Ա լսարանի ուսանող Հակոբ Խաչատրյանը՝ հատված Ն. Զարյանի «Չայն հայրենական» պոեմից: Սարկավագների խումբը ոգևորությամբ երգում է «Արիացեալք» մանկունք շարականը, Արարատ սրկ. Գալստյանը՝ Մ. Եկմալյանի «Լոնց. ամպերը եկան ծածկեցին» երգը:

Օրվա հանդեսի գլխավոր բանախոսն է հոգևոր ճեմարանի դասախոս Ս. Հովհիսյանը, որը և վեր է հանում օրվա խորհրդի ազգային, կրոնական և պատմական նշանակությունը:

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի պատգամով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Փետրվարի 1-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ ԲՅՆ. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայտապետը:

Փետրվարի 6-ին, ուրբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց տ. Օշին Վրդ. Նիկողոսյանը և իր ուխտը կատարելուց հետո, ամսի 12-ին, վերադարձավ ժնե:

Փետրվարի 8-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Մեծ պահքի առաջին կիրակին է: Մայր տաճարում, փակ խորանի վրա, պատարագում է ատ. Հովհաննես ԲՅՆ. Մարուքյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Այսուհետև ի բաց ընկեցարուք ի ձեռք զխաբեութիւն և զշարութիւն» բնաբանով:

Ս. պատարագի երգեցողությունը Մեծ պահոց շրջանում կատարելու է հոգևոր ճեմարանի երգչախումբը:

Փետրվարի 11-ին, չորեքշաբթի.—Այսօր առավոտյան ժամը 8-ին, հավարտ ժամերգության, կատարվում է Արևագալի հանգիստավոր ժամերգություն՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Հայրապետի: Ժամերգությանը ներկա են Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի ուսանողությունը, դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունն ու աշխատավորությունը:

Փետրվարի 13-ին, ուրբաթ.—Այսօր, հավարտ երեկոյան խաղաղական ժամերգության, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հանդիսավոր հսկում, որին ներկա էին բազմաթիվ հավատացյալներ:

Փետրվարի 14-ին, շաբաթ.—Տեառնընդանայ.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Ս. պատարագի երգեցողությունը հաջողությամբ կատարեց հոգևոր ճեմարանի ուսանողությունը՝ ղեկավարությամբ Արարատ սրկ. Գալստյանի:

Փետրվարի 15-ին, կիրակի.—Բ կիրակի Բառասնորդական պահոց (Արտաքսման).

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Նարեկ վրդ. Շաքարյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Հուսիկ եպո. Սանթրոքյանը՝ «Զի որ յայսմ ծառայէ Քրիստոսի հաճոյ է Աստուծոյ և ընտիր մարդկան» բնաբանով:

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայտապետը:

Փետրվարի 22-ին, կիրակի.—Բ կիրակի Բառասնորդական պահոց (Անառակի).

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը՝ «Զի այս որդի իմ մեռեալ էր եւ եկեաց. կորուսեալ էր եւ գտաւ» քնարանով:

*
*
*

Փետրվարի 25-ին, չորեքշաբթի.— Շուրջ երկամսյա՝ զեպի Հնդկաստան կատարած հովվական այցելությունից հետո Մայր Աթոռ

վերադարձավ Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի հայրապետական պատվիրակ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը: Երևանի օդանավակայանում տ. Հայկազուն արքեպիսկոպոսին զիմավորեցին տ. Հոսիկ եպս. Սանթրոյանը և Եղիշե սրկ. Բաղրամյանը:

Հայկազուն արքազանը Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, առաջնորդվում է Վեհարան և ջերմորեն ընդունվում Վեհափառ Հայրապետի կողմից:





Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ
Մ Ա Ս Ի Ն

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԱՐՔ, ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԼՇՄԻԱԺԻՆ

ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ.

Զերդ Սրբության նոյեմբեր 26, 1968 թվակիր պաշտոնագրով կյանքի կոչած Երուսաղեմի Հանձնաժողովը բաղկացած հետևյալ հոգևորականներեն և աշխարհականներեն՝

տ. Սերովբե արքեպ. Մանուկյան
տ. Սիոն արքեպ. Մանուկյան
տիար Ալեք Մանուկյան
տիար Տատուր Տատուրյան
տիար Միքայել Մազմանյան
տիար Րիչըրտ Կրեկլորի
տիար Սեդրակ Քարյան

այսու որդիական ակնածանք կմատուցանե իր սուաբեղության տեղեկագիրը՝ հայցելով Զերդ Սրբության հայրական ներողամտությունը անոր ականա հապաղումին համար:

Բացի տ. Սիոն արքեպ. Մանուկյանե և տիար Միքայել՝ Մազմանյանե, որոնք ծանոթ պատճառներով չէին կրցած ուղևորիլ ս. Քաղաք, Հանձնաժողովին մնացյալ անդամները հինգշաբթի, փետրվար 20, 1969, երեկոյան ժամը 5-ին առաջնորդվեցան Երուսաղեմի հայոց պատրիարքարան, ուր պաշտոնապես ողջունվեցան Ս. Հակոբյանց միաբանության պետ անեն. տ. Եղիշե պատրիարք Տերտերյանի, լուսարարապետ տ. Հարիկ արքեպ. Արսլանյանի և դիվանապետ տ. Ծաֆե եպս. Անենյանի կողմե:

Ամեն. Պատրիարք սրբազան հայրը շերտ սիրով ողջունեց Ձերդ Սրբության անունով ներկայացող Հանձնաժողովը՝ խոստանալով կարելի բոլոր միջոցներով դյուրացնել անոր աշխատանքները, Ձեր նույններ 26, 1968 թվակիր պաշտոնագրով բանաձևված իր առաքելության նպատակներուն ուղղությամբ: Արդարև՝ թե՛ ա. Քաղաքին մեջ իր կատարած աշխատանքներուն ընթացքին և թե՛ այնուհետև ցայժմ Հանձնաժողովը վայելեց և կվայելե Պատրիարք սրբազան հոր և գործակիցներուն անվերապա գործակցությունը:

Հանձնաժողովը, պատրիարքարանին մեջ, մասնակցությամբ Պատրիարք սրբազան հոր, լուսարարապետ և դիվանապետ սրբազան հարց, գումարեց պաշտոնական երեք երկարատև նիստեր, որոնց ընթացքին քննարկեց իր առաքելության հետ աղերս ունեցող հարցերը, ուսումնասիրեց վավերաթուղթեր և արձանագրություններ և հանգեցավ համապատասխան որոշումներու, քննական այցելություն մը տվավ ա. Հակոբա Գանձատան և ա. Թորոսի, ուր կպահվի հայ Երուսաղեմի ձեռագրական անգին հավաքածոն, և միաբաններու թաղին: Հանձնաժողովի անդամները բազմիցս խորհրդակցական հանդիպումներ ունեցան և անպաշտոն կերպով տեսակցեցան զանազաններու հետ:

Ա.—Երուսաղեմի Գանձատունեն անհատացած և ապա վերադարձված ձեռագիրներու պարագան

Իր քննությանց ընթացքին, Հանձնաժողովը հաստատեց իրեն իրողություն, որ՝

1. Ա. Հակոբյանց վանքին Գանձատունը՝ ունի երկու մաս: Մին՝ ամենեն գործածականը, ա. Մինաս մատուռն է, որ կգտնվի ա. Հակոբ եկեղեցվո մեջ և անկե բաժնված է կղզանք կրող երկաթյա ծանր դուռով մը. մյուսը՝ մատրան կից գանձատունը², որ գաղտնի սենյակ մըն է, ուր կպահվին արժեքավոր կրոնական զգեստներ, սկիհներ, իրեղեններ, ձեռագիրներ: Գանձատուն կոչված այս սենյակն ալ բաժնված է ա. Մինաս մատուռեն կղզանք կրող երկաթյա դուռով մը:

2. 1960-են առաջ, միաբանությունը ունեցած է Գանձատան Հանձնախումբ մը, որուն անդամները կընկերակցեին լուսարարապետին, վերջնույն Գանձատուն կատարած մուտքին և անկե ելքին: Հատուկ տոմարի մը մեջ արձանագրված են Գանձատունեն դուրս ելած առարկաները, թվականով, վերադարձվածները ևս արձանագրված են, բայց առանց թվականի:

1960-են ի վեր կազմալուծված է Գանձատան Հանձնախումբը և միայն լուսարարապետը կկրե Գանձատան բանալիները:

3. Իրերահաջորդ լուսարարապետներ սովորություն չեն ըրած իրենց պաշտոնակոչումի պահեն նախորդեն պահանջելու Գանձատան գույքերուն ցուցակը և զայն բաղդատելու եղածին հետ: Գոյություն չէ ունեցած բնավ Գանձատան բոլոր գույքերուն ամբողջական ցուցակ մը: Կա՝ 1907-ին Մեսրոպ վրդ. Նշանյանի (ապա պատրիարք) կողմե պատրաստված ցուցակ մը, որ գանձատան մեջ պահված 131 ձեռագիրներու ցանկն է, զոր 1965-ին լուսարարապետ Հայրիկ արքեպ. նույնությամբ ընդօրինակված է, առանց զայն բաղդատելու եղածներուն հետ, ըստ իր հավաստումին:

Ծանոթ.—Սույն տեղեկագրին մեջ.

1. Գանձատուն (գլխագիր Գ տառով) բառով պետք է հասկնալ ա. Մինաս մատուռն ու հոն գտնվող գաղտնի սենյակը, միասնաբար.

2. գանձատուն (մանրագիր գ տառով), միայն գաղտնի սենյակը:

4. Պատրիարքարանը ամենեն առաջ Գ. Կոլպենկյան հիմնարկության փետրվար 15, 1967 թվակիր հեռագրեն և պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանի փետրվար 17, 1967 թվակիր նամակեն տեղեկացած է Լոնդոնի հանրաժանոթ Սաթըպի տան կողմե Ս. Հակոբյանց վանքին ձեռագրական հավաքածոյին պատկանող 23 հայկական ձեռագիրներուն մարտ 14, 1967-ին ծրագրված աճուրդով վաճառքին մասին: Անմիջական ստուգում մը Նշանյան վրդ.-ի ցանկին հիմամբ կհաստատեն, թե զանձատան 131 ձեռագիրներեն կպակսին 28-ը, որոնց 23-ը Սաթըպիի մոտ: Կհասնին Չերդ Սրբության հեռագիր-հրահանգները՝ ամեն գնով փրկելու ձեռագիրները: Պատրիարք սրբազանը փետրվար 21, 1967-ին բացատրություն պահանջած է Սաթըպիեն ձեռագիրներու աղբյուրին և զանոնք հանձնողին մասին ու նույն ատեն պաշտոն տված դիվանապետ Ծահե եպսկ.-ին Լոնդոն մեկնելով արգիլելու վաճառքը և ապահովելու ձեռագիրներուն վերադարձը ս. Աթոռ:

5. Ծահե սրբազան, պատրիարքարանի Լոնդոնի իրավաբաններուն պատրաստել տված է դատական բողոքագիր մը ընդդեմ Սաթըպիի: Սակայն, անգլիացի փաստաբանները՝ դիտել տալով դատական հետապնդումի գործնական և իրավական բազմաթիվ դժվարությունները, ի ներկայության Անգլիո հայրապետական պատվիրակ տ. Պասկ արքեպ.-ի և լոնդոնաբնակ խումբ մը ազգայիններու, խորհուրդ տված են բանազնաց Ծահե սրբազանի՝ հանուն Պատրիարք հոր, համաձայնության գալ Սաթըպիին հետ:

Հավանությամբ ինքնությունը անհայտ վաճառողին կամ միջնորդին, Սաթըպի կընդունի բանակցիլ, և կհոժարի փոխան քառասուն հազար դոլլարի Ծահե եպսկ.-ին հանձնել 23 ձեռագիրները:

6. Սաթըպիի մոտ վաճառքի դրված և այնուհետև վերադարձված 23 ձեռագիրներեն 22-ը զանձատան մեջ եղած են 1952-ին: Պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյան, այդ տարին երբ այցելած է Երուսաղեմ, անձնապես տեսած ու քննած է զանոնք:

7. Հանձնաժողովը զանձատան մեջ գտավ Նշանյան վրդ.-ի ցանկագրած 131 ձեռագիրներեն 126-ը: Կպակսեին 5 ձեռագիրներ, որոնք են.

	Գանձատան թվահամար	Ձեռագրաց Մատենադարանի թվահամար	Ծանոթություն
ա)	4	2559	ԱՍՏ՝ԱՄԱՇՈՒՆՆ 2 արծաթապատ, մագաղաթ, գրիչ՝ ամթեցի տեր Միքայել և Մինաս վարդապետ, հերոսաղեմ, ՌՀԱ-ՌԶԱ, 1622—32:
բ)	20	2575	ԱՎԵՏԱՐԱՆ ոսկիապատ, մագաղաթ և ակունքներով, ստացող՝ Կոլոտ Հովհաննես պատրիարք ի Կ. Պոլիս:
գ)	36	2591	ԱՎԵՏԱՐԱՆ արծաթապատ, մագաղաթ, գրիչ՝ Աստվածատուր Դպիր:
դ)	71	2626	ԱՎԵՏԱՐԱՆ արծաթապատ, մագաղաթ, քարերով, ստացող՝ Մահտեսի Ամիրազիզ Բաղիշեցի, ՌՀԱ, 1626:
ե)	108	2663	ԱՎԵՏԱՐԱՆ արծաթապատ, չորս քարով, հիշատակարան՝ թերի: Գրչալ ի թվին ՊԿԳ, 1414:

8. Հանձնաժողովի քննության պահուն, 126 ձեռագիրները շարված էին ուղղահայաց, թվագրյալ, զույգ մը փայտյա ապակեդարաններու մեջ: Եթե մարտ, 1967-են առաջ անոնք այս կերպով դասավորված ըլլային, անկարելի էր որ լուսարարապետին ուշադրութենեն վրիպեր վերցված 28 ձեռագիրներ:

րուն թողած պարագությունը: Հայտնվեցավ, թե մինչև մարտ, 1967, գանձատան ձեռագիրները շարված եղած են խառն ի խոռոն, դեռ ու դեռ:

Եզրակացություններ

1. Հանձնաժողովը չկրցավ հաստատել, թե ե՞րբ, որո՞ւ կամ որո՞նց կողմն է ի՛նչ պայմաններու ներքև խնդրո առարկա 28 ձեռագիրները վերցված են ս. Հակոբյա գանձատունեն:

2. Ո՛չ մեկ փաստ գտավ, որ հաստատեր ողղակիորեն, անուղղակիորեն թե հետևությանը, ամեն. Եղիշե պատրիարք Տերտեղյանի և կամ գեր. Ծաֆնեպա.-ի մասնակցությունը 28 ձեռագիրներուն անհետացման:

3. Ո՛չ մեկ փաստ գտավ, որ հաստատեր ողղակիորեն, անուղղակիորեն թե հետևությանը, Թուրքիո հայոց պատրիարք ամեն. Ծնորհք արքեպ. Գալուստյանի մասնակցությունը 28 ձեռագիրներուն անհետացման: Տ. Ծնորհք արքեպ.-ի անունը առնչված է այս տխուր դեպքին Հորդանանի դատախազին կողմն, մարտ 13, 1967-ին իր կատարած նախնական հետաքննության առթիվ:

Դատախազին ամբողջ տեղեկագիրը հիմնված է փետրվար 12, 1959 թվակիր գրության մը վրա, ստորագրված պատրիարքության հաստենի ընդհանուր գործավար գեր. Սուրեն արքեպ. Քեմհաճյանե: Այս գիրը՝ ողղված «առ որ անկ է», կարտոնն Անդրանիկ Սանտրիկյանին (մահացած 1967-են առաջ) Լոնդոն փոխադրելու Երուսաղեմի հայոց պատրիարքության պատկառող 28 ձեռագիրներ, առանց բացատրության և առանց զանոնք նկարագրելու: Դատախազը՝ Ծնորհք պատրիարքի անունը ներմոծած է տեղեկագրին մեջ պարզապես որովհետև փետրվար 12, 1959-ին ա՛ն էր ս. Աթոռույն լուսարարակետը:

4. Դատախազը չէ հարցապնդած տ. Սուրեն արքեպ. Քեմհաճյանը, — որ 87-ամյա ծերունի մըն է, գրեթե կորսնցուցած աչքերուն լույսը, — այդ գրույն բովանդակության գիտակ ըլլալուն մասին և, թեև Սուրեն արքեպ. ընդունած է ստորագրության իրը ըլլալը, ըստ դատախազին տեղեկագրին, բայց դատախազը չէ ստուգած, որ սրբազանը արդարև այդպիսի բովանդակությանը թուղթ մը ստորագրած է: Սուրեն արքեպ. չընդունիր բովանդակության գիտակ ըլլալով նման թուղթ մը ստորագրած ըլլալը:

Դատախազը արարքը կորակե գողություն, բայց փետրվար 12, 1959 թվակիր գրությունը գողության ապացույց չէ:

Թեև նախնական հետաքննությունը փակված է նախքան 1965-ը գործված հանցանքներու ընդհանուր ներում շնորհող օրենքը հիմ ունենալով, սակայն հորդանանյան այդ օրենքը պետք չէ գործադրվեր այս պարագային, քանի որ ոչ մեկ ապացույց կա, թե 28 ձեռագիրները վերցված են 1965-են առաջ, ինչպես նաև ոչ մեկ ապացույց կա, թե անոնք վերցված են 1965-են ետք:

Վերոհիշյալ պատճառներով Հորդանանի դատախազին եզրակացությունները անհիմն են և անվավեր, ուստի անընդունելի:

5. Երբ գիտցվի գանձատունեն ցարդ պակասող 5 ձեռագիրներուն ուր գտնվիլը և եթե հնար ըլլա այն առեն դատական հետապնդում մը, պետք է զայն կատարել անպայման: Գուցե այդ հետապնդումը լույս սփռե նաև այժմ վերադարձված 23 ձեռագիրները վաճառող կամ վաճառքի մատուցանող հանցագործին կամ հանցագործներուն վրա:

Առաջարկներ

Հանձնաժողովը՝ անպաշտպան, անապահով և անկազմակերպ գտնելով Գանձատունը, և նման չարաղետ պատահարներու առաջքը առնելու նպատակով, անմիջական գործադրության համար առաջարկեց ամեն. տ. Եղիշե պատրիարքին.

1. Վերակազմել միաբանության Գանձատան Հանձնախումբը.

2. Գնել և ս. Սիմեոն մատրան մեջ տեղավորել 3 կղպանքով երկայնա հաստատուն արկղ մը և այնտեղ պահել գանձատան բանալին: Գանձատան Հանձնախումբի երեք անդամներեն յուրաքանչյուրին տալ 3 կղպանքով արկղին բանալիներեն մին:

3. Ս. Սիմեոն մատրան մեջ պահել կանոնավոր տոմար մը, ուր պետք է արձանագրվի գանձատունեն վերցված ամեն իր այնպիսի կերպով մը, որ տոմարին վրա ակնարկ մը բավեր ցույց տալու դուրս ելածը, վերադարձվածն ու չվերադարձվածը՝ թվականներով:

Ամեն. Պատրիարք հայրը ընդունեց վերոհիշյալ առաջարկները և հանձն տալ անհապաղ գործադրել զանոնք:

Բ. Վանքապատկան ձեռագիրներու և արժեքավոր շարժական իրերու ցուցակագրության պարագան

Հանձնաժողովը հաստատեց իբրև իրողություն, որ՝

1. Պատրիարքարանի ձեռագրական հարստության զանգվածը ի պահ կմնա ս. Թորոս մատրան մեջ, որուն մաս կկազմե Մատենադարանը: Ընդունված սովորության մը համաձայն, ի սկզբանե ինչ որ գտնված է գանձատան մեջ, մնացած է հոն, ինչ որ գտնված է ս. Թորոսի մեջ, մնացած է հոն: Այսինքն՝ որևէ հարաբերական արժեք հիմ չէ կազմած այս կերպ տեղադրության: Ի տարբերություն Գանձատան, ս. Թորոսի ձեռագիրները կպահվին խնամքով և կանոնավորապես՝ հոգածությամբ ու հսկողությամբ գեր. տ. Նորայր եպս. Պողարյանի, որ տեղվույն շուրջ 4000 ձեռագիրներեն 1000-ը ցուցակագրած է:

2. Ս. Թորոս մատուռը ևս անապահով է և անպաշտպան: Վերջերս՝ ի հետևանք մատրան դուռը քանդելով ներս մտնելու մի քանի ավազակային փորձերու՝ երկայնա ցանց մը գետնելված է մուտքի դրան առջև:

Առաջարկներ

Հանձնաժողովը առաջարկեց և ամեն. Պատրիարք հայրը ընդունեց.

1. Մինչև կառուցումը նախընտրաբար ընդհատակյա վայրի մը, ուր պետք է մեկտեղվին և խնամքով պահվին ս. Թորոսի և Գանձատան բոլոր ձեռագիրներն ու թանկագին իրերէնները, անմիջապես գնել պողպատյա լայն արկղ մը և տեղավորել ս. Թորոսի մեջ և հոն պահել ս. Թորոսի ամենեն արժեքավոր ձեռագիրները:

2. Առավել ևս ամրացնել ս. Թորոս մատրան արտաքին դուռը և երկայնա ձողեր ագուցել բոլոր պատուհաններուն:

3. Ամեն աշակցություն ընծայել տ. Նորայր եպս. Պողարյանի՝ ամբողջացնելու բոլոր ձեռագիրներուն, ներառյալ Գանձատան, ցուցակագրումը:

4. Մանրալուսանկարել բոլոր ձեռագիրները:

5. Կազմել հանձնախումբ մը՝ բաղկացած լուսարարապետեն և երեք հայագետներէ, մասնագետ հայագիտական զանազան ճյուղերու, նշանակված Ամենայն Հայոց Հայրապետեն և ս. Երուսաղեմի ամեն. Պատրիարքեն, որ պաշտոն ունենա ցուցակագրելու պատրիարքարանին կրօնական, պատմական և մշակութային գանձերը: Ցուցակէն օրինակ մը պահել պատրիարքարան և օրինակ մը դրկել Ամենայն Հայոց Հայրապետին:

6. Սույն հանձնախումբին երկու տարին անգամ մը կատարել տալ ցուցակային ստուգումը ձեռագիրներուն և պատմական-գեղարվեստական գանձերուն, արդյունքին մասին տեղեկագրելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

* * *

Փակելէ առաջ այս հատվածը, Հանձնաժողովը Ձերդ Սրբության բարձր ուշադրության կհանձնէ այն պարագան, թե տակավին ի գորու գտալ ավանդությունը, ըստ որում Երուսաղեմի պատրիարքին անգամ կարգիլի մտտը գործել գանձատուն: Հանձնաժողովը կխորհի, թե Պատրիարք սրբազան հայրը՝ ըլլալով վերին իշխանավորն ու պաշտոնյան ս. Երուսաղեմի պատրիարքության, պատասխանատվություն ունի հսկելու բոլոր ձեռագիրներուն և բոլոր գանձերուն անխաթար պահպանման, ուստի խոնարհաբար կթելադրէ, որ ջնջվի ավանդական արգելքը, որպէսզի Պատրիարք հայրը լրիվ գործադրէ իր պարտականությունը, Գանձատան հանձնախումբին հետ ընդունված կարգով:

Վերջաբան

Հանձնաժողովը, տվյալ պայմաններուն մէջ, իր կարելի լավագույնը ըրալ ի կատար ածելու Ձերդ Սրբության կողմէ իրեն բարձրորեն վստահված պարտականությունը, առաջնորդվելով շինարար և դրական ոգիով և մնալով առարկայական ու անաչառ:

Ձեռագիրներու դժբախտ պատահարին հանցագործին կամ հանցագործներուն և դէռ անհայտ մնացող հինգ ձեռագիրներուն հայտնաբերման հարցը պետք է հետապնդել մինչև լուծում երբ անհրաժեշտ կարելություններ ստեղծվին:

Հանձնաժողովը հոգեկան խոր մխիթարությամբ հաստատեց հայ Երուսաղեմի մէջ ամեն. Պատրիարք սրբազան հոր և իր գործակիցներուն հառաջ տարած կրօնա-մշակութային ներուժ աշխատանքը՝ հաւատարիմ նախնյաց ավանդներուն: Զգալապէս ավելցած է թիւը ժառանգավոր սաներուն, որոնց կշաւքի կրօնական և ազգային լավ դաստիարակություն:

Պատրիարքարանի կրթական-դաստիարակչական կարևոր գործոնն է ս. Թարգմանչաց վարժարանը, ուր շուրջ 300 հայ աշակերտներ կստանան մտային սնունդ և հայեցի կրթություն, տեսչությանը ներքև հոգ. Կյուրեղ Ծ. վրդ. Գաբրիկյանի:

Սփյուռքահայության գոյապայքարի ազդակներ պարգևելու տեսակետէն մեծ են ս. Աթոռույն հնարավորությունները, որոնք պետք է առավելագույն չափով օգտագործվին: Այս բանին համար անհրաժեշտ է հայ ժողովուրդին անկերպարան աջակցությունը:

Հանձնաժողովը ուրախությամբ կարձանագրե Պատրիարք հոր և Ս. Հակոբյանց միաբանության սու նախամեծար Մայր Աթոռ ս. Էջմիածին և Ամենայն Հայոց Հայրապետ ունեցած անստույն հավատարմությունն ու տաժած որդիական սերը, որոնց սպասույցը եղան Հանձնաժողովին ընձեռված առանձնաշնորհումն ու դյուրությունները:

Հանձնաժողովը, իր աշխատանքներուն ընթացքին և իր կարգին, գործնապես հաստատեց, թե Հայց. եկեղեցվո միությունը, գորությունն ու հառաջադիմությունը առանց այլևայլի պայմանավոր են Մայր Աթոռ ս. Էջմիածնով և Ամենայն Հայոց Հայրապետության հեղինակության դրական, անսակարկ և ամբողջական հարգումով:

Եվ հիմա՝

Զերդ Սրբության խոնարհաբար մատուցանելով միաձայն որոշումներով գրառնված և միաձայնությամբ վավերացված սույն տեղեկագիրը և ներկայացնելով մեր կազմին հավաքական հրաժարականը, մնամք որդիական ակնածանք և համբուրիվ Զեր Օծյալ ս. Աջույն՝

Ստորագրությունք

ԱՆԴԱՄՔ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

ՍԵՐՈՎԵՆ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆ—Նախագահ

ԱԼԵՔ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՏԱՏՈՒՐ ՏԱՏՈՒՐՅԱՆ

ՐԻԶԸՐՏ ԿՐԵԿԸՐԻ

ՍԵՂՐԱԿ ՔԱՐՅԱՆ

Հուլիս 23, 1969





Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ԿԱՆԽԱԳՈՒՅՆ ԳՐԱԴՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խոսքը Կոմիտասի 1893 թվականի հոգևոր երգերի ժողովածուի մասին է:

Այն ընդհանուր առմամբ համառոտ բնութագրել ենք արդեն, առաջ բերել լրիվ տիտղոսաթերթը, նյութերի ցանկը (16 կտոր) ու երկու երգի փոխադրությունը եվրոպական ձայնանիշերի¹:

Ծարունակում ենք այս վերջին աշխատանքը, մաս առ մաս ներկայացնելու համար ողջ ժողովածուն (հիշյալ ցանկում հաստատագրված հերթակարգի համաձայն):

- 1.—«Հաիկ մի պայծառ տեսի».
- 2.—«Ահեղ ձայնս որ ես լրուայ».
- 3.—«Հաւուն հաւուն արթնացեալ»:

Երբեք էլ Գրիգոր Նարեկացու տաղերն են:

Առաջինը «Հաիկ»-ի ինչպես Կոմիտասյան², այն-

պես էլ առհասարակ հայկական նոր ձայնագրության եվրոպական հիշերով երբևէ իրագործված գրառում-

տեղում, նյութ № 336. այստեղ նյութին կից կա նաև եղանակի փոխադրությունը եվրոպական ձայնանիշերի, որ կատարել է Կ. Մանկասարյանը, և որը կարիք ունի խմբագրման ու ճշգրտման): Եվ երրորդը՝ նույնի արտագրությունը, որ կատարել է Սպ. Մեյիքյանը, հոգևոր մի երկու այլ երգերի հետ միասին, վերջում տեղեկացնելով հետևյալը. «Երգեց Գառնակերյան, ձայնագրեց Կ. վ. Գևորգյան, արտագրեց Ս. ս. Մեյիքյան» (նույն տեղում, նյութ № 339): Ընդհանուր առմամբ այս տարբերակը, որն ստեղծված պետք է լինի մինչև 1904 թվականը, զգալիորեն ավելի կատարյալ է, հատկապես եղանակի ելևէջային զարգացման բուն պատկերը վերագտնելու առումով Սակայն, սրանով էլ չբավարարվելով, Կոմիտասը մի երրորդ անգամ անդրադարձել է «Հաիկ»-ին, ի վերջո ինքն էլ երգել է այն, տաղի նաև կատարողական առանձնահատկությունների փայլուն իմացությամբ, ու գրառել տվել ձայնակալառակի վրա, որ վերաբերում է երաժշտի գործունեության վերջին շրջանին (բարբախտաբար, «Հաիկ»-ի գրառումով ձայնակալառակներից մեկը մինչև այժմ էլ պահպանված է Կոմիտասի երևանյան դիվանում): Այս երրորդ տարբերակում է, որ լրիվ բացահայտված են «Հաիկ»-ի կոթողային գծերը: Այն, Կոմիտասի երգածից ձայնագրելով, հրատարակել է Մ. Աղայանը (տես Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, հատ. 2, կազմ. Մ. Աղայան, խմբ. Քր. Կուշնարյան, Երևան, 1950, էջ 100):

¹ «Էջմիածին», 1969, ԺԲ, էջ 56 (Նշխարների հայոց հոգևոր եղանակների Կոմիտասյան գրառումներից):

² Եղանակը ճշտությամբ ձայնագրելով Ս. վրդ. Ամատունու երգածից, Կոմիտասը այն իրավացիորեն համարել է տվյալ տաղի երաժշտական բաղկացուցիչ տակալին մոտավոր մի մարմնավորումը և շարունակել որոնումները՝ մեղեդիական կերպարի ավելի հարազատ դրսևորմանը հասնելու նպատակով: Այդ ճանապարհի վրա մի նոր փուլ է գոյացնում նույն տաղի եղանակի Կոմիտասի ձեռագրերում պահպանվող մեկ այլ տարբերակը, որին հանդիպեցինք երեք նյութերի մեջ: Առաջինը՝ եղանակի ձայնագրության սևագիրն է, հայկական հիշերով (ԳԱԹ, Կոմիտասի դիվան, նյութ № 1540): Երկրորդը՝ դրա մաքրագիրը (նույն

թվից հնագույնն է³ և անցյալում հրատարակված չի էլի:
Երբեք, որը ձայնագրված է Գևորգ ար. Արքայանման Ռշտունու երգածից, Նարեկացու «Ես ձայն լեռնիմուն» տաղի «փոխ» կոչված մասն է⁴: Սրանից մոլորակներապես գոմ է եղել Կոմիտասը և մի տարի քցց հրատարակել այն՝ իր անդրանիկ հողվածում, սերնդագրական ոչ մեծ շտկումներով, բայց դարձյալ մեղկական ձայնանիշներով⁵:

³ Բացի կոմիտասյան գրառումներից, գոյություն ունի «Հալի»-ի եղանակի երկու այլ տարբերակների ձայնագրություններ: Մեկն իրագործել է տակավին Մ. քն. Խումաշյանը՝ Լ. քն. Նախաշյանցի կաշարումից (տես Ձայնագրելալ Տաղարան, Վաղարշապատ, 1900, էջ 24—25): Մյուսը հրատարակվել է «Ձայն» տարեգրություն (Հալեա, 1926), որտեղից և տարատարակվել է Էդ. Հակոբյանը (տես Հայկական պատարագի տաղեր և մեղեդիներ, Գանիրե, 1963, էջ 3):

⁴ Ընդհանրապես ասած, հիշյալ տաղը միջնադարյան գրչագրերում ևս բաժանված է լինում երկու մասի. **տաղ** կամ **մեղեդի** և **լորդորակ** կամ **փոխ**, տարբեր խազավորումներով: Ըստ որում, գրչագրերի մի խմբում **լորդորակը** կամ **փոխը** սկսում է «Չամուրս իմ ասկել կամի» երկատողից (տես Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 5328, էջ 183բ, № 4350, էջ 138ա, № 425, էջ 49ա), իսկ մյուսում՝ հենց «Ամեղ սպցնս որ ես լուսա» խոսքերից (նույն տեղում, ձեռ. № 4117, էջ 220ա, № 428, էջ 186ա, № 426, էջ 82բ, № 4767, էջ 171բ):

⁵ Տես Կոմիտաս, Հայոց եկեղեցական եղանակներ, «Արարատ», 1894, № 7, էջ 223 (տարիներ վերջ լինիլ «Արարատ»-ում տպագրվածը եկրուպական ձայնանիշների փոխադրեց Ռ. Թերլեմեզյանը. տես Կոմիտաս, հողվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 107):

Երրորդը նույնպես գրաված է Արքանման Ռշտունու երգածից: Դատելով պահպանված նյութերից, դրա ձայնագրությանը Կոմիտասը այլևս չի անդրադարձել, հավանաբար այն համարելով հիմնականում ավարտված: Եվ իրոք, սույն գրառումը բացահիկ է նույն տաղի եղանակի երկու այլ տարբերակների համեմատությամբ⁶, և որպես Կոմիտասի դիվանի նյութ հրատարակվում է առաջին անգամ⁷:

⁶ Բննարկվող տաղը («Հալուն, հալուն») առաջին անգամ ձայնագրել է Ն. Թաշճյանը, անհասկանալի պատճառներով զանց առնելով բանաստեղծության առաջին տողը (տես Ձայնագրելալ երգեցողությունը սրբոյ պատարագի, Վաղարշապատ, 1878, էջ 99—101): Ձայնագրությունը կատարված է մասնագիտական բարձր մակարդակով: Բայց, անկախ դրանից, գրաված եղանակը, ի տարբերություն Կոմիտասի ձայնագրածի (որ ավելի հարագատ է Նարեկացու ոգուն ու ժամանակին), արտացոլում է հայ տաղերգության 12—13-րդ դարերին հատուկ մակարդակը և, մասնավորապես, կիլիկյան երաժշտական նուրբ ճաշակը: Մի տարբերակ էլ հրատարակել է Էդ. Հակոբյանը (տես Հայկական պատարագի տաղեր և մեղեդիներ, էջ 23), Կ. Պոլսում կենցաղավարած եղանակով, որը սակայն, ցույց է տալիս երգի խանգարման մի վիճակը:

⁷ «Էջմիածին» ամսագրում մի քանի տարի առաջ տարագրվածը (1966, Դ) տաղիս՝ Ռ. Աթապանի կողմից թեթևակի խմբագրված ու մշակված մի պատկերն է, որ պետք էր առաջ բերել՝ նախապես հանրության սեփականությունը դարձնելով բուն իսկ կոմիտասյան նյութը:



ՀԱՆԻԿ

Հայր ծովի Բի

Հա-նիկ մի պալ-ծառ

տե պի առ

ճը-ման առ - ճը - մա - ճիդ

ով դու

ճը - ման

դու ճը - ման

ԱՆԵՂ ՉԱՅՆՈ


Մամուր Բ4

Ա - հեղ ծայնո.
որ ես լը ուայ
սա քա - կէ քա - մուրս
որ ու ցիմ:

ՀԱԻՈՒՆ ՀԱԻՈՒՆ

Մամուր Դ2 և Ա4

Հա - տուց. հա -
տուց արթ - ցա -
ցեալ դի - տե - լով
զիտ - քա - ցուս.



ԳՈՂԱՐ ԱԶՆԱՎՈՒԹՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հայաստանի կուլտուրայի միևնույնության ենթակա Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը դարձել է հայրենիքի գիտա-հետազոտական-մշակութային կարևոր օջախներից մեկը, որի անունով ու հասցեով տարվա բոլոր եղանակներին ու ամիսներին ստացվում են նորանոր արխիվներ, առանձին վավերագրեր, պարբերական մամուլի հավաքածուներ, ժամանակակից հրատարակություններ, լուսանկարներ, իրեր (այս կամ այն նշանավոր մտավորականին պատկանող), որոնք հարթադրվում են ու համալրում թանգարանում գտնվող մեր արժեքները:

Չեռագրերի հավաքման և թանգարանում կենտրոնացնելու գործում իր մեծ քաժինն են բերում և անգնահատելի դեր կատարում սփյուռքի հայությունը, ինչպես առանձին կազմակերպություններ, այնպես էլ անհատ գրողներ, արվեստագետներ, առանձին մտավորականներ և հայրենասեր անհատներ, որոնք ոչ մի ջանք ու ճիգ չեն խնայում՝ տասնյակ տարիներ իրենց մոտ խնամքով պահված արժեքները փոխադրելու մայր հայրենիք, դարձնելու այն հայ ժողովրդի սեփականությունը:

Չխոսելով վերջին տասնամյակում (1957—1967 թթ.) սփյուռքից թանգարան հասած բազմաթիվ մեծ ու փոքր արխիվների ստացման և նշանակության կարևորության մասին, կկամենայինք կանգ առնել վերջին երկու՝ 1968 և 1969 թվականներին սփյուռքից, նաև հայրենիքի տարբեր վայրերից ստացված ամբողջական արխիվների

ու առանձին արխիվային հատվածների ու նյութերի մասին, որոնց թիվը ըստ մայր մատյանի գրանցումների անցնում է 200-ից: Ներկայումս թանգարանի երեք (գրական, թատերական և երաժշտական) քաժիններում կենտրոնացած առանձին, անվանական արխիվների թիվն անցնում է 600-ից: 1962 թվականից առ 1970 թվականի հունվարի 1-ը թանգարանի ֆոնդերի թիվն ավելացել է մեկ-երրորդով. միայն գրական քաժինի արխիվների թիվը նույն ժամանակամիջոցում 205-ից հասել է 307-ի, մի թիվ, որը ռեկորդային կարելի է համարել: Թանգարան հասած արխիվներն ստացվում են տարբեր ճանապարհներով, հիմնականում սփյուռքի հետ մշակութային կապի կոմիտեի, Հայաստան ժամանած հյուրերի, զբոսաշրջիկների, փոստային առաքումների, հայրենիքից սփյուռք մեկնած խմբերի, առանձին գիտական աշխատողների միջոցով և այլ ուղիներով:

Առանձնապես պետք է նշել Վազգեն Ա. կաթողիկոսի կատարած խոշոր դերը՝ արտասահման կատարած իր ճանապարհորդության ժամանակ տարբեր վայրերում ներքան հանձնված արխիվները և առանձին արժեքները սփյուռքից ապահով Հայաստան տեղափոխելու և համապատասխան հիմնարկներին տեղաբաշխելու գործում:

Վեհափառի ջանքերով թանգարան հասան Րաֆֆու, Տիրայր արքեպիսկոպոսի, Դանիել Վարուժանի, Համաստեղի և այլ մտավորականների արխիվներն ու իրերը, գրադարաններն ու մամուլը:

Այս փոքրիկ ստաշարանից հետո կկանգնվենք կանգ առնել տարբեր հայ կենտրոններից երկու տարվա ընթացքում թանգարան հասած արժեքների վրա: Նշենք, որ օգ գործում ստաշին տեղը իրավամբ պատկանում է ամերիկահայ գաղութին:

Ամբողջական արխիվներից հիշատակենք Վու-Յորքից բանաստեղծ, լրագրող և հայերաբանական գործիչ, ստաշին համաշխարհային պատերազմի տարիներին Պոլսի ամերիկյան դեսպան, հայասեր Պրկնթաուի Բրտուղար և թարգմանիչ Հակոբ Անտոնյանի հարուստ արխիվի մի շատ կարևոր մասը, հիմնականում սփյուռքի մտավորականության անվանի ներկայացուցիչներից ստացած նամակները, իր ազգային-մշակութային գործունեության վերաբերող վավերագրեր, լուսանկարների հավաքածու և լվլև, որոնք սերտ առնչություն ունեն չորրորդահայ գաղթօջախների պատմության և ազգային հարցը ուսումնասիրողների հայտը: Արխիվն ստացված է գրող և «Հուշարար»-ի խմբագիր, մշակութային ակտիվ գործիչ Անդրանիկ Փոլատյանից: Անտոնյան արխիվի երկրորդ մասը նույնպես գտնվում է իր մոտ, որը խոստացել է ուղարկել ստաշիկա տարիներին, որով և կամբողջապես Անտոնյանի արխիվը:

Երկրորդ կարևոր արխիվն ստացված է Եսարմյալ Նյու-Յորքից, հայ ակադեմիկոս Լամաստեղի կյանքին ու գործունեությանը առնչվող, հիմնականում հեղինակի և նրա 70-ամյա հոբելյանը կազմակերպող հանձնաժողովի գործունեությանը:

Արխիվն իր մեջ պարունակում է հանձնատուղու կողմից սփյուռքի, նաև հայրենիքի սամապատասխան հիմնարկ-կազմակերպություններից, գրողների և մտավորականությանը հղած ու ստացած պատասխանները, այդ թվում և՛ Լամաստեղից ստացված արձեռագրեր ու հետաքրքիր նամակները: Արխիվն իր մեջ պարունակում է շուրջ 1500 վավերագրեր, այդ թվում՝ Լամաստեղի հոբելյանը իր վերահաս մահվան պատճառով չգտ հանդեսի վերածելու և նրա հիշատակին նվիրված միջոցառումների մասին եղած նյութերը:

Լամաստեղի արխիվը Նյու-Յորքում Վեմսիատին են հանձնել հոբելյանական հանձնաժողովի նախագահ, գրող Արամ Հայկազը և քարտուղար, մշակութային գործիչ, մանկավարժ Հակոբ Խաչմանյանը (այժմ հանգուցյալ):

Նշենք նաև, որ Լամաստեղի արխիվն ամբողջությամբ պահվում է հեղինակի ժառանգների՝ օր. օր. Լորիկ և Արմինե Լամաստեղների մոտ, որոնք սպրում են հուստումով:

Անշուշտ թանգարանի տնօրինությունը որոշ հույսեր ունի, որ Լամաստեղի դուստրերը վերջ ի վերջո մեծ գրողի ժառանգությունը պիտի ուղարկեն հայրենիք, որպեսզի ոչ միայն համայնքի թանգարանում գտնվածը, այլև ստաշիկայում հնարավորություն տրվի մշակելու, ուսումնասիրելու նրա գրական ժառանգությունը:

1969 թ. Հովհ. Թումանյանի հոբելյանի օրերին, որպես զբոսաշրջիկ, Հայաստան ժամանած Արամ Հայկազն իր հետ բերել էր Լամաստեղին վերաբերող նյութերի մի քանի նոր թղթապանակներ: Ա. Հայկազը հայրենիքում գտնված ժամանակ խոստացավ իր մոտ գտնված Լամաստեղին վերաբերող մյուս նյութերը նույնպես ստաշիկայում ուղարկել թանգարանին, որը և կհամալրի հեղինակի արխիվը:

Երրորդ խոշոր արխիվը, որ ստացվեց վերջերս Բոստոնից, գրող, խմբագիր-հրապարակագիր Անդրանիկ Անդրեասյանի ջանքերով, հայ ազատագրական պայքարի, ՌԱԿ-ի գլխավոր գործիչներից մեկի՝ Հրաչ Հարությունի Երվանդի (Նշան Յագուպյանի) արխիվն է: Հրաչ Երվանդի արխիվը հիմնականում սփյուռքի տարբեր վայրերում հրատարակած և իր խմբագրած մի շարք պարբերականների, այդ թվում՝ «Պայքար» օրաթերթին աշխատակցող մտավորականության հետ ունեցած նամակագրությունն ու գրագրությունն է ամփոփում, որով և բացահայտվում է անխուց գործի և հրապարակագրի մարդկային ազնիվ, անկաշտ պիմանկարը և վեց տասնամյակից ավելի ժամանակաշրջանում կատարած իր բովանդակային ու բեղմնավոր գործունեությունը, որը համակնիքում է եղել ազգապահպանման գործին և ազգային դատին:

Ա. Անդրեասյանի և տիկին Աղավնի Ավագյանի ջանքերին ենք պարտական նաև «Հայաստանի կոչնակ»-ի խմբագիր, գրող-քննադատ Հովհաննես Ավագյանի հարուստ արխիվի և «Հայաստանի կոչնակ»-ի 40 տարվա հավաքածուների ստաշումը: Նշենք նաև, որ Անդրեասյանը, լինելով մեր հայտնի գրողներից մեկը, երբեմն «սխալվելով» թանգարանին է առաքել իր ստեղծագործություններից նմուշներ, որոնց հիման վրա թանգարանում ստեղծված է նույնպես իր անվան արխիվ, որը խիստ կարիք ունի համալրվելու:

Նյու-Յորքից ստացված նյութերի թեև բանակով փոքր, սակայն որակով մեծ արժեք ներկայացնող արխիվների թվում է գրականության և արվեստի թանգարանի լավագույն բարեկամ, գրող, հրապարակագիր, Թվատիցու սիրելի աշակերտներից մեկի՝ Բենիամին Նորիկյանի արխիվը, որը

Նյու-Յորքում՝ հեղինակի մոտ գտնվող իր հարուստ արխիվի մի կարևոր մասն է կազմում։ Ստացված նյութերի մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում Խարբերդիի և Հակոբի վարժարանի շրջանից իր գրքչին պատկանող տետրերը, տարբեր ձեռնակաշրջանի ստեղծագործությունների ձեռագրերը՝ գրած և ստացած նամակները, Թվկատինցու դպրոցի աշակերտ եղած ժամանակաշրջանի աշակերտական թերթերի հազվագյուտ նմուշները, որի խմբագիրն է հանդիսացել ինքը և աշխատակիցը՝ իր ուսուցիչ Թվկատինցին, ապա պարզ կլինի, թե որքան արժեքավոր են ինչպես հայրենիքում հյուր եղած օրերին իր թերածները, այնպես էլ փոստով պարբերաբար կատարած առաքումները, որոնց շարունակությունը և՛ ցանկալի, և՛ անհրաժեշտություն է թե՛ իր և թե՛ թանգարանի համար, որտեղ և կազմված է իր անվան առանձին արխիվ։

Վերջերս կոմիտասյան հոբելյանական փառատոնին մասնակցելու համար Նյու-Յորքից Հայաստան հյուր եկած գրող, կոմիտասագետ, երգիչ Հակոբ Ասատուրյանից թանգարանը նվեր ստացավ իր գրական-երաժշտական գործունեությունը բովանդակող բազմաթիվ նյութեր, հոդվածներ, գնահատականներ, սխյուրքի մեջ կազմակերպած զեկուցումների ու համերգների հաշտագրեր և այլն, որոնք ցույց են տալիս, թե որքան բեղմնավոր գործունեություն է հանդես բերում Հ. Ասատուրյանը հաջը հաջ պահելու համար օտար հորիզոնների տակ։

Առանձին արժեք է ներկայացնում Նյու-Յորքում հրատարակվող «Նոր աշխարհ» պարբերականի խմբագիր, հրապարակագիր Սամվել Թումաջանից Վեհափառին հանձնած Պետրոս Դուրյանի երկու քերթվածների ինքնագրերը, որոնք առաջին հազվագյուտ նմուշներն են Հայաստանի մեջ։ Ա. Թումաջանն ողորկել էր նաև Տեմիրճիպաշյանի, Խրիմյանի, Ալիշանի և այլոց ձեռագրերը, որոնք պահվում են թանգարանում և որոնք նույնպես հանձնված են Վեհափառի կողմից։

ԱՄՆ-ից ստացվեցին նաև տիկին Զարուհի Գալեմբյարյանի, Դ. Վարուժանի, Սիրանուշի, Միրան Օշինի, տիկին Վերծին Էքսերճյանի, Վաղարշակ Գալուստյանի, տիկ. Նվարդ Մերդենյանի, Լևոն Քեշիշյանի, Առաքել Նդիկյանի, Սահակ Մամիկոնյանի, Գ. Կառվարեցի և ուրիշների գրչին պատկանող ստեղծագործություններ, նամակներ, հուշեր, լուսանկարներ և այլն, որոնք բոլորն էլ խնամքով պահվում են թանգարանի համապատասխան արխիվներում։

Արխիվների ստաբիլ հարստացում կարևոր տեղ է բռնում նաև ֆրանսահայ գաղութը։

Միայն վերջին մեկ տարում Ֆրանսիայից ստացվել են Ռուբեն Սևակի, Տիգրան Կամսարականի, Լևոն Բաշալյանի, Արտ. Հարությունյանի, օր. Մարգարիտ Բաբայանի, Ավետիս Ալեքսանյանի, Հովակիմ Ֆերմանյանի (Խոսնակ), Գ. Նորատունկյանի, Մկ. Պեշկաշյանի, Թորոս Թորանյանի, Մ. Զարիֆյանի, դերասանուհի Փառանձեմի, Սիմայի, Վազգեն Շուշանյանի և այլ գրողների, արվեստագետների ու մտավորականների ձեռագրերից թանկարժեք նմուշներ, որոնք խիստ արժեքավոր են թե՛ նույն հեղինակների գործունեության և թե՛ մեր մշակույթի պատմության հարստացման համար։ Վերոհիշյալ նյութերն ստացվել են իրենց հեղինակներից, նրանց հարազատներից (Ս. Աթմանյանից, Ռ. Մելիքից, Թ. Թորանյանից), գրողներից և այլ կազմակերպություններից, այդ թվում՝ Փարիզի Մշակութային միությունից Ադասի Դարբինյանի միջոցով և այլն։ Նշենք, որ 1968 թ. Հայաստանում հյուր եղած օրերին, Սիամոնյոյի մասին իր գրած արժեքավոր հուշերը թանգարանին հանձնեց բանաստեղծի քույրը՝ տիկին Զապել Յարմանյան-Համբարձումյանը։

Հետևյալը Կասաբլանկայում բնակվող Ժ. Աբիգյանից ստացվեց իր մոտ տասնյակ տարիներ խնամքով պահված հաջ մեծ քերթող Դանիել Վարուժանի գրչին պատկանող քերթվածների ինքնագիր տետրը, նամակներ, վավերագրեր և այլ նյութեր՝ դարձյալ Վազգեն Ա. կաթողիկոսի միջոցով ու ջանքերով, և վերջերս էլ Վարուժանի «Հացին երգը» Պոլսի 1921 թ. հրատարակության «Հուշամատյանի» և «Արյան հաղթանակի» բազմաթիվ օրինակները։ Ստացված օրինակները բաժանվեցին համապատասխան գրադարաններին և գրականությամբ զբաղվող մտավորականներին։

Թանգարան հասավ նաև «Հայ կին»-ի երկարամյա խմբագիր, գրող և մշակութային գործիչ Հայկանուշ Մաթի արխիվի մի մասը և «Հայ կին»-ի հավաքածուները։

Տարբեր անհատների միջոցով ստացվել է արևմտահայ թատրոնի պատմության և մտավորականների կենսագրության վերաբերող նյութեր, Թ. Ագառյանի գրադարանի հնաստիպ գրքերից, Կոմիտասի կամերտոնը և այլ նյութեր։

Վերջերս ակադեմիայի արվեստի ինստիտուտի դիրեկտոր, դոկտոր-պրոֆ. Ռ. Զարյանի միջոցով ստացվեցին Ավստրալիայի հայ գաղութի մտավորականներից մեկի՝ Վանթան Երիցյանի նյութերը, այդ թվում՝ նմուշներ իր ստեղծագործություններից, հուշեր Մերկոնի հայ գաղթօջախի մասին և այլ նյութեր։

Հայաստան ժամանած Ասատուր Կյուզել-ձեհի միջոցով Լոնդոնից՝ Գրիգոր Տառնուր-ձեհից ստացվեց բանաստեղծ Ահաբոն Տառնուրյանի արխիվը, և Արամ ու Արշակ Բաֆ-ձեհերին պատկանող նյութեր է. Կյուզելեկ-ձեհից:

Բեկդիայից Հայաստան ժամանած մշա-տութային գործիչ օր. Մելիսե Գովանդյանը շուրջ նյութերով համալրեց թանգարանում ձևակող իր արխիվը:

Բեկյուրթից երաժիշտ-խմբավար Բարսեղ առանաչյանի (Կոմիտասի աշակերտ) արժե-նավոր արխիվը, այդ թվում՝ «Արեղա» օպե-րայի գլավիրը՝ Հայաստան ժամանած իր ժողիկնոցից և դուստրից:

Մելքոն Կյուրճյանի արխիվային նյութե-րից, ինքնուրույն և թարգմանական, և Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի արե-ցնդառահայերենի վերածած օրինակը՝ իր հար-խից: Հ. Արսեն Դազիկյանի ժամացույցը՝ Լ. Ազգեկն Թյուրյունյանից, Վ. Թեբեյանի ջգարեղիեֆը՝ Մ. Հասրաթյանից, և այլ նյու-թեր:

Իրանից ստացվել են հայ գրողների ստեղծագործությունների իրանական թարգ-մանությունները՝ Ալեք Խաչունցի թարգմա-նությունը:

Թումանյանական օրերին Հայաստանում հիշյոր եղած հաշագետ-թարգմանիչ Լուրմիլա ՄՄոսաղովայից՝ իր թարգմանական գործե-րից:

Բեռլինից՝ Ավ. Խառնակյանի գրչին պատ-կանող համակները Վահան Զաքարյանին, Ավարիայի հոգևոր հովիվ Մեսրոպ վար-դապետ Գրիգորյանի միջոցով:

Խաղացի պրոֆեսոր և բանաստեղծ Մա-րիո Վերտոնեի թարգմանությամբ Ե. Զա-րենցի բանաստեղծությունների 1968 թ. հրատարակությունը՝ Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանի տեառչ հայր Մեսրոպ Ազբլյանից, և այլ նյութեր, որոնք ստացվել են փյուրքում ապրող մեր հայ-րենակիցներից:

Մեր համառոտ հիշատակումները թերի կլինեն, եթե չհշեինք հանրապետության տարբեր քաղաքներից, հաս՝ Մոսկվայից, Թբիլիսիից և տարբեր վայրերից ստացված արխիվներն ու արխիվային փաստաթղթերը:

Նշենք նրանցից մի քանիսը միայն: Հովհ. Թումանյանի և Կոմիտասի հոբել-յանների առթիվ ստացվեցին հեղինակների գրչին պատկանող ստեղծագործություններ, համակներ, լուսանկարներ, համերգների հայտագրեր, որոնք համալրեցին իրենց ար-խիվները:

Հովհ. Թումանյանի ժառանգներից ձեռք բերվեց հեղինակի ստեղծագործություննե-րից «Պոեան ու մուսան», «Էնայի աննուն»

և այլ նյութերի ինքնագրերը և իր գրած մա-մակները:

Ստացված է հաս Լ. Ծանթից Հ. Թուման-յանին գրած համակների հավաքածուն, ո-րոնք գրված են անցյալ դարի վերջերից մինչև 1910-ական թվականները:

Կոմիտասի համակը Մ. Բաքալյանին ստացված է տիկ. Մատի Աթմանյանից, Կո-միտասի Ժնևում տված համերգի հայտագի-րը և այլ նյութեր:

Ավ. Խառնակյանի տուն-թանգարանից՝ բանաստեղծի ստեղծագործությունների ինք-նագրերը, բանաստեղծ Հ. Հովհաննիսյանի, Վ. Տերյանի, կոմպոզիտոր Հարո Ստեփան-յանի, երաժշտագետ Վասիլ Լորդանյանի, գրականագետ, թարգմանիչ Սաքո Սուքիաս-յանի, իրանահայ գրող, բանաստեղծ, թարգմանիչ Արտավազ Ավագյանի, հայ թատրոնին, երաժշտությանը, գրականու-թյան պատմությանը վերաբերող բազմաթիվ նյութեր և այլն:

Թանգարանն ստացել է հաս բազմաթիվ հուշեր, ինչպես օրինակ՝ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը՝ իր աշակերտ Ավսել Բա-կունցի, մանկավարժ Վահրամ Դարբաշա-նը՝ իր բրոշ՝ Արուս Ոսկանյանի, Հո. Սերին-գույանը՝ Միամանթյոյի, Արմենակ Ծանմու-րադյանի, դերասան-երգիչ Լևոն Իսկելյու և այլոց մասին գրված հուշերը:

Հոբելյանական օրերին թանգարանը կազ-մակերպել էր Հովհ. Թումանյանին և Կոմի-տասին նվիրված շրջիկ ցուցահանդեսներ, որոնք ցուցադրվել են Երևանում և Մոսկվա-յում՝ հոբելյանների կատարման օրերին:

Թանգարանը հայ մեծ երգիծաբան Եր-վանդ Օռյանի հոբելյանի օրերին, որը նըշ-վեց դեկտեմբերի 29-ին, կազմակերպեց նույնպես ցուցահանդես, որը հետաքրքրու-թյամբ դիտեցին ունկնդիրները:

Այս տարի թանգարանը հրատարակեց Դևոնդ Ալիշանի «Նամականի»-ն և, գրուսա-շրջիկներին ծանոթացնելու նպատակով, բուկլին: Պատրաստ է հաս թատերական բաժնի «Ուղեցույց»-ը և «Արևմտահայ գրող-ների համականի» խորագրով հատորը:

Այս բոլորը եզրափակենք հետևյալով, որ 1969 թ. դեկտեմբերի 23-ին գրականության և արվեստի թանգարանը նկարչուհի Ռեզի-նա Դազարյանից նվեր ստացավ Եղիշե Զա-րենցի ստեղծագործություններից շուրջ 23 անուն նյութեր, վերադաս մարմիններին ող-դած դիմումներ, հեռագրեր և այլն, որոնց ընդհանուր տողերի քանակն հասնում է 2280-ի: Նշենք մի քանիսը միայն. «Երկու տոնետ» (Լ. Մ. ի հիշատակին) ընդարձակ պոեմը, «Լեռան ստորք»-ից, «Դոֆին Նա-րական»-ից, «Զվարթ գիտություն»-ից հատ-վածներ և ուրիշներ, որոնք և համալրում են

թանգարանում եղածը:

Այստեղ արժե հիշատակել նաև, որ դեռևս 1957 թ., Ե. Չարենցի ծննդյան 60-ամյա հոբելյանի նախօրեին, Ռ. Ղազարյանը իր մոտ գտնված հեղինակի ստեղծագործություններից «Կոմիտաս» պոեմի ավարտած տառերակի, ռուբայիների, բեյթերի, դիստեքուների և այլ ստեղծագործությունների ինքնագրերը հանձնել է բանաստեղծի սվագ դուստր Արփենիկ Չարենցին, որոնց մի մասը իր ժամանակին հանձնվեց թանգարանին: Այսպիսով, Ե. Չարենցի արխիվը ևս տարեցտարի համալրվում է նորանոր նյու-

թերով, որով հնարավորություն է տրվում Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտին՝ հրատարակելու բանաստեղծի 7-րդ հատորը, որը պատրաստում է բանաստեղծի կրտսեր դուստրը՝ Անահիտ Չարենցը:

Թանգարանի տնօրինությունը շնորհակալություն է հայտնում բոլոր նվիրատուներին, միաժամանակ հույս ունենալով, որ առաջիկա տարին նույնպես բեղմնավոր կլինի թանգարանի հունձքը, ինչպես և անցյալներում:



ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՅՈՒ «ՊԱՏԱՐԱԳԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ»*

Մակեդոնական հետևյալ գրքում ունի «Քննության միջինակարգ հաստատության հարցն առանցությանը» զբոսագիրք: Այստեղ քննվում է այն հարցը, թե «ո՞ր աղագաւ եմոտ այսպիսի անբարեկամությունն ի մէջ դրէ»⁷²: Հայ ժողովրդի, հոգևորականության և հայրապետական Աթոռի անկախուն դրությունը, օտարների մակալ լուծն ու կրոնական հալածանքները իրենց բացասական ազդեցությունը թողեցին նաև հայ եկեղեցու վրա: Այսամ 10—11-րդ դարերից, խորթ ստորություններն ու անբարեկամությունները աստիճանաբար տեղ էին գտնում հայ եկեղեցում, և «սցնուշտե ուղղել դժվարին է գնում»⁷³ որ զշար սովորութիւնն յերկարութեամբ ժամանակին իբրև զերկրորդ միութիւն ստացան. այսպէս և մեր ի վաղ ժամանակաց հետեւ սկսեալք կոխել զեկեղեցական բարեկարգութիւն և զսահման հայրենի...»⁷⁴: Սակայն Լամբրոնացին այդ խտրորոմների պատճառները կապում է չ միայն մեր ժողովրդի հասարակական-քաղաքացւոյն անբարեկամատ կյանքի պայմանների, այլև հոգևորականների տարբեր խավերի գործունեության վետ: Եվ քանի որ հոգևորականության ամենալայն շրջալը և ամբիջապէս ժողովրդի հետ կապ ունեցողները քահանաներն են, ուստի դրանց պարտականությունների և արտոնների մասին Լամբրոնացին ավելի մանրամասնորեն է խոսում: Քահանան հոգևորականության հիմքն է. նրանով է սկսվում ժողովրդի բարեկապաւտական և բարոյակրթական դաստիարակությունը: Ամենից առաջ քահանան պիտի լավ իմանա որ գործը՝ իր մարբախալ վարքով լինի օրինակելի, քանի որ նա ամեն օր, ամեն ժամ ժողովրդի մէջ է, շփվում է նրա հետ. «Կասն այսորիկ թարգմանի ա-

նուն նորա մաքրող, քանզի առնու զամենեցուն զգործքս, լուանայ յաղտոյ արեամբս Քրիստոսի և նուիրե հօր...»⁷⁵: Քահանաներին վերաբերող թերությունները վերլուծելուց հետո մեկնիչը եզրակացնում է. եթե քահանաներն իրենց պարտականություններին մոտենան խղճի մտքը, ազնվորեն, ապա նրանք անպայման կարճ ժամանակամիջոցում կարող են հայ եկեղեցուց դուրս վանել խորթ, օտարոտի սովորությունները, որոնք այլասերում են հավատն ու ժողովուրդը: Ազատվելով այդ նորամուտ, վնասակար ծեսերից, պետք է անպայման վերականգնել նախնիների դրան եկեղեցական նվիրական կարգերը: «Այսպիսի հայրենի առանցութեանս հետեւալ պայծառապէս փայլեցուցուր զփառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի գործս մեր...»⁷⁶:

Ըստ այս մեկնության մեծ է հոգևորականների դերը ժողովուրդների հոգևոր, քանական ու մարմնական բարօր կյանք ստեղծելու գործում: Տեղեկաբար անիմանալի ու առեղծվածային ոչինչ չկա մարդու համար, քանի որ կա հոգու աչքերը լուսավորող գիտություն, որի գործադրմամբ, հայտնի երևույթների ու մտքերի հիման վրա, փորձով ու ճիշտ ճանաչողությամբ կարելի է «զաներկույթս իմաստասիրել», իսկ այդ «գիտությունը» աներկույթ երևույթները ի վիճակի կլինի լուսավորելու միայն այն ժամանակ, երբ մարդը կլինի լայնախոն, ճշմարտասեր և որ գլխավորն է՝ կունենա հոգու ատող աչքեր, այլապես «անմարթ է՝ անտաւոր մտօք յանախտ լոյսս հալի»⁷⁷: Իսկ ինչ պետք է անել՝ մարդկանց մտքի և հոգու աչքերը միշտ ատող պահելու համար, որպեսզի մարդը պայծառ կերպով տեսնի ու ընկալի հոգու լույսը, գիտությունը: Այստեղ արդեն Լամբրոնացին զը-

⁷² Անդ, էջ 54:

⁷³ Անդ, էջ 54:

* Գարունակված «Էջմիածին» ամսագրի 1968 թ.

№ 6 և 1969 թ. № 9-ից:

⁷⁴ Անդ, էջ 433:

⁷⁵ Անդ, էջ 79:

⁷⁶ Անդ, էջ 104:

խափոք տեղը տալիս է ճշմարտությանը, իսկ որպեսզի ճշմարտությունը որոշվի կեղծից ու անճշտություններից, անհրաժեշտ է «զիտի» և «փուշ» որոմնացան մշակին յանդատումնէ մտաց մեր աստուածային հրովն մաքրեալ, զուտ և պայծառ յօրինեաց զիմանալիս հոգւոյս պարզութիւն, որ կարօտի այսուհետս այլ ինչ նշույլ իմաստից ի վերայ իր արտափայլել...»⁷⁷: Առանձնապես «Իմաստութեամբ բացահայտութիւն» գլխում ամեն առիթով նա շեշտում է բանականության և գիտության դերը կյանքում և հատկապես եկեղեցու բնագավառում աշխատողների համար: Իր մտքերը հետաքրքիր դարձնելու համար նա դիմում է պատկերավոր խոսքին, առանձնապես համեմատություններին և այլաբանություններին: Միջազնաձ, անմշակ միտքը նման է ժանգոտած արծաթի, որի վրա այլևս չեն արտափայլում արևի պայծառ ճառագայթները: Բայց երբ այդ ժանգը արծաթի վրայից «լուսադողական օճառօք ի բաց մաքրեն, շողացուցանելով զնոյն ընդդէմ արեգականն» վաղվադակի ինքն ընդունի զճագումն ճառագայթիցն, և նովա գեր քան զբնութիւնն պայծառանալ»⁷⁸: Ապա համեմատվում են մարդու մտքի և արևի լույսերը: Միևնույն արևի լույսը մարդիկ տարբեր կերպով են ընկալում: Առողջ աչքեր ունեցողները տեսնում են իսկական, պայծառ լույսը, իսկ հիվանդները՝ ոչ, թեև միևնույն արևն է երկուսի համար էլ: Նրանք, ովքեր մտքի առողջ աչքեր ունեն, կարող են թափանցել իմանալի արեգակի լույսի մեջ, իսկ ովքեր անառողջ են մտքի աչքերով՝ չեն տեսնի այդ լույսի պայծառությունը և գեղեցկությունը. «Արեգակնդ որ լերկիմն... միշտ նոցն է լուսաւորիչ, և ոչ որ ասէ ի վերջին ժամանակս աղօտացեալ զգորտութիւն ճառագայթիցն կամ նուազեալ. բայց հաղեցողքս և ընդունողքս լուսոյն ոչ ենք նոցն, որք ի մարմին աչաց զնոյն պարփակեմք»⁷⁹: Խուզարկու միտքը, ձգտումը և հույսը մարդուն կարող են դարձնել հոգով անաբարտելի, մտահարուստ: Բանականության և մտքի նպատակն է՝ վերահասու լինել ճշմարտությանը:

Հոգևոր հայրերը երբեք չպիտի հեռու կանգնեն գիտությունից, այլապես նրանք նման կլինեն կույրերի: Երբ ժողովուրդը չունենա լուսամիտ, գիտակից հոգևոր հայրեր, էլ ո՛վ պիտի մարդկանց հաղորդակից դարձնի գիտությանը: Գիտությունից զուրկ ժողովուրդը նման կլինի խուլերի: Արտառոց է, երբ խուլերի մի հսկայական բանակ առաջնորդեն կույրերը. «Ո՛վ է խուլն, եթէ ոչ ժողովուրդն իմ և ո՛վ է կույրն, եթէ ոչ որ տիրեն նոցա»⁸⁰: Չափազանց դուրին և հաճելի է հովվել, եթե հովիվը գիտակից է, իմաստուն է, ճանաչում է չարն ու բարին: Հիմա, — ասում է Լամբրոնացին, — առանց գիտության լույսի դժվար է քարոզել ժողովրդի մեջ. «Բայց մի՛, եղբայրք, և այլևս բաւական է ընդ խաբս մոլորութիւն.

տաւցուր անագան ուրեմն տեղի ճշմարտութեան յանձինս ... և քան զամենայն ուսուցիչսն և զծերսն իմաստնաւ... և իմացեալ զթիւր շափոսն ատել, և ճրագ զլոյսն ունելով՝ ի յափտեմական կեանսն լուսաւոր շաղօք ժամանել...»⁸¹:

Պակաս ուշագրաւ չէ «Մեկնութիւն պատարագի» գրքի «Բնախօսութեամբ քննութիւն յաղագս զօրութեան աղօթից» ենթագլուխը: Այստեղ հեղինակը գիտնականի ու հոգեբանի հմտությամբ բացատրում է աղօթքի գաղափարական և հոգևոր նշանակությունը:

Աշխարհի բոլոր արարածները, ըստ մեկնիչի, բացի երկնային բնակիչներից, կազմված են նյութից, անում են հողով, ջրով և լույսով, բազմաճում, ապրում, մահանում են՝ վերստին միանալով մայր բնության հետ՝ «ի ծոց անդ մօրն դարձեալ լուծանել»⁸²: Երկրային բոլոր արարածների մեջ ամենաիմաստունը, բանականը մարդն է, որը օժտված է զգալու, մտածելու, կամենալու և գործելու կարողությամբ: Բացի այդ, մարդը կարող է արտահայտել իր զգացածն ու մտածածը, այսինքն՝ ունի լեզու, որից զուրկ են աշխարհի մնացած բոլոր բազմասեռ կենդանիները: Սակայն անմտություն և հիմարություն է համարում Լամբրոնացին՝ մարդու և կենդանիների տարբերությունը տեսնել միայն լեզու ունենալու մեջ⁸³: Գլխավոր տարբերությունը ողջ հոգեկան աշխարհի մեջ է, մարդն ունի հոգի, իսկ անասունները՝ ոչ: Եվ քանի որ ըստ ս. Գրքի Աստված հոգի է, ուստի մարդու հոգու և սուրբ Հոգու մեջ հոգեկան հաղորդակցություն տեսլծողը աղոթքն է՝ «այսինքն զիմանալի միտս առ իմանալին Աստուած... զի այս է, որ զնա հաշտեցուցանէ և ոչ բարբառ բերանոյ»⁸⁴: Հոգեկան հաղորդակցության լավագույն և ազդեցիկ միջոցներից մեկն էլ հոգևոր երգն է: Պատարագի մեկնության մեջ բացահիլ խոշոր տեղ է տրվում եկեղեցական երաժշտությանը: Ոչ միայն գեղեցիկ խոսքը, արտաբուխ աղոթքը և պերճաբան քարոզները ազդում են մարդու հոգու վրա, այլ նաև հոգևոր երաժշտությունը: Մարդիկ գալիս են եկեղեցի, դրսի, առօրյա, աշխարհիկ գործերի տարախորություններով և մտահոգություններով: Բայց երբ լսում են «զհեշտալուր երգս սաղմուսաց երգեալ՝ մաքրեն ի մտաց նոցա զմարմնական տիպսն, և երգովքս յափշտակեալ զբաղեցուցանեն զմիտսն նոցին յաստուածայինսն»⁸⁵: Եթե սաղմունների եղանակներն այդպես հափշտակում են հավատացյալի հոգին, մոռացնել տալիս դրսի աշխարհիկ կյանքը, ապա որքա՞ն հմայիչ է ու հարազատ, մեր ազգային, բազմատեսակ հոգևոր երգը՝ իր քաղցրալուր եղանակներով: Լսենք Լամբրոնացուն. «Ո՛չ գիտեք եղբայրք, զձայնս աշխարհականաց պարարիչ երաժշտական զօրութեամբն յեկեղեցի սահմանեալ, որպէս-

⁷⁷ Անդ, էջ 93:

⁷⁸ Անդ, էջ 93:

⁷⁹ Անդ, էջ 102—103:

⁸⁰ Անդ, էջ 105:

⁸¹ Անդ, էջ 109:

⁸² Անդ, էջ 110:

⁸³ Անդ, էջ 110:

⁸⁴ Անդ, էջ 111:

⁸⁵ Անդ, էջ 284:

«... և գործություն արժեատի՜ն քաղցրացեալ արտից նսցա՜յն...»⁸⁶։ Ապա մեկ-
 օրէնքը հարցնում է՝ արդո՞ւք հայկական քաղցրանկազ
 դարականները, բազմատեսակ տաղերն ու գանձերը,
 յիշողըրը առաջվա պէս կատարվում են ժամերգության
 շաւմանակ. մեռ՛ւմ են արդո՞ւք ազգային նախկին ա-
 ռադարտ եղանակները հայ եկեղեցում, զոն՛ւմ է
 արդո՞ւք մեր հոգևոր երգը նախնիների սահմանած ու-
 ռի՜նով... Երգի և աղոթքի տպավորությունը միշտ ու-
 ռմելո պահելու համար, եկեղեցու կարգը և ճաշակը
 պահանջում են զգույշ լինել, որովհետև արհեստա-
 յան և աննպատակ ավելորդությունները ոչ միայն
 սխալման, այլև վնասակար են ու կարգի խախտում։
 Միշտ պետք է նկատի ունենալ նաև ժամավորների
 անխափառություններն ու ճաշակը, ըստ որում երբեք
 աշակերտել հոգևոր երաժշտությունը։ Իր այս միտքը
 փիլիսոփայութեամբ համար Լամբրոնացին վկայակոչում է
 Միլոդու առաքելի այն խոսքը, թե «մի՛ տեղի բանիք
 դուրսնեցուցանէ՛ք զհոգին սուրբ Աստուծոյ, որով կըն-
 քեցարուք»⁸⁷։

Մեկնելու եղանակը Լամբրոնացու մոտ մեծ մա-
 յաւանք ալլաբանական է և մասամբ՝ իմաստաբանա-
 վական։ Մեկնությունն սկսվում է նրանով, թե ինչ նշա-
 նակություն ունի քահանայի և սարկավագի «արայծա-
 տազգեստ» տարազը, տրվում է պատարագի ժամա-
 նակ քահանայի կատարած աղոթքների, սաղմունե-
 րի, ավետարանի և սարկավագի քարոզների նշանա-
 վկայությունը։ Մեկնության մեջ առանձնահատուկ ուշա-
 րդողություն է դարձված աղոթքների և սաղմունների
 լեռնային վրա, մեկնաբանվում է, թե ինչու քահա-
 նան սեղանի առաջ լվանում է իր ձեռքերը, ինչո՞ւ
 «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» երգի ժամանակ
